

ՀՀ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ 12-ՐԴ ԽՈՒՄԲԸ ՀԱԼԵՊԻ ՀԱՆՏԱՐԱԹ ՇՐՋԱՆԻՆ ՄԵՋ ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՅԱՆՁՆԵՅ 135.000 ԲՈԿ. ՄԵԹՐ ԱԿԱՆԱԶԵՐԾՈՒՄԾ ՏԱՐԱԾԸ

Հալեպի մեջ 33 մարդասիրական ականազերծման հերթական 12-րդ խումբի աշխատանքը կեդրոնացած էր Հալեպի հիւսիս-արեւելքը գտնուող Հանտարաթ բանակավայրին մեջ:



Հայրենի սակրաւորներու կողմէ 2023-ի Մարտէն Օգոստոս ամիսներուն իրականացած ականազերծման աշխատանքէն ետք, մաքրուած տարածքը յանձնուեցաւ Հալեպի տեղական իշխանութեան: Այս բովանդակութեամբ յանձնումի եւ ստանձնումի գիրքեր ստորագրուեցան:

Շար.՝ էջ 2 >

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՅՅԵԼԵՅ ԼԻԲԱՆԱՆԻ ՄՕՏ ԻՐԱՆԻ ԴԵՄՊԱՆԸ

ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոս «Գնահատելով Իրանի զօրակցութիւնը Հայաստանի ու Արցախի գծով, կը սպասենք աւելին»

Երեքշաբթի, 22 Օգոստոս 2023-ին, ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը երկար հանդիպում մը ունեցաւ Լիբանանի մօտ Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպան Մուճրապի Ամանիի հետ:

Քննարկումներուն մեջ յատուկ տեղ գրաւեց Արցախի շրջափակումը Ատրապէճանի կողմէ: Վեհափառ հայրապետը անհրաժեշտ տեղեկութիւններ փոխանցեց դեսպանին, յատկապէս անդրադառնալով շրջափակումին հետեւանքով Արցախի մէջ ստեղծուած մարդասիրական տագնապին եւ անոր ծանր հետեւանքներուն: Ապա, Նորին Սրբութիւնը ըսաւ, թէ երկու հիմնական հարցեր կը գտնուին Արցախի դիմաց՝ շրջափակումին անյապաղ վերջ տալը եւ Արցախի ինքնորոշման ճանաչումը: Արագ ակնարկ մը նետելով Արցախի պատմութեան վրայ, հայրապետը կարեւորութեամբ յիշեց Իրանի ցուցաբերած զօրակցութիւնը ընդհանրապէս Հայաստան-Ատրապէճան տագնապին եւ յատկապէս Արցախի հարցին քաղաքական լուծման՝ արդարութեան ու ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքին վրայ հիմնուած: Ծարունակելով իր խօսքը, Նորին Ս. Օծութիւնը շեշտեց, թէ հայ ժողովուրդը աւելին կը սպասէ Իրանէն, յատկապէս Արցախի տագնապի այս ճակատագրական փուլին:



Դեսպանը մօտէն ծանօթ ըլլալով Արցախի հարցին, խոստացաւ վեհափառ հայրապետին մտահոգութիւններն ու սպասումները փոխանցել Իրանի Իսլամական Հանրապետութեան պատասխանատուներուն:

Հանդիպման ընթացքին նաեւ քննարկուեցան Լիբանանի նախագահական ընտրութեան առնչուած հարցեր եւ այս ուղղութեամբ վերջին շրջանին տեղի ունեցած զարգացումները՝ տեղական, շրջանային եւ միջազգային մակարդակներու վրայ: Դեսպանը ողջունեց վեհափառ հայրապետին ու Լիբանանի հայ համայնքին տարած աշխատանքները եւ որդեգրած դիրքորոշումները նախագահական ընտրութեան առնչուած:

Հանդիպման աւարտին, Արամ Ա. Կաթողիկոս անդրադարձաւ նաեւ յառաջիկային Իրանի հայութեան տալիք իր հովուապետական այցելութեան մանրամասնութիւններուն:

ՍՓԻՒՔԱԶԱՅԵՐՈՒ «ՍԵՒՅՈՒՅԱԿ» ՊԷՏԸ ԳԵ ԸԼԼԱՅ

Աւելի քան տարի մըն է, ինչ որ շինծու մեղադրանքով արգիլուած է 337 Բիւրոյի անդամ, Ֆրանսայի հայկական կազմակերպութիւններու համակարգող խորհուրդի համանախագահ Մուրատ Փափագեանի մուտքը Հայաստան: Եւ սակայն առաջին ու միակ դէպքը չէ: Ցաւալի է, բայց փաստ, որ ինչպէս ե՛ւ Ատրապէճանի, ե՛ւ Հայաստանի մէջ գոյութիւն ունի հայկական շահերու պաշտպաններու «սեյցուցակ»:



Օրուան իշխանութիւններու քաղաքականութեան նկատմամբ դրսեւորուած անհամաձայնութիւնը որեւէ պարագայի չի կրնար հիմք հանդիսանալ Հայրենիք մուտքի արգելքի համար: Նման սահմանափակումները հիմնովին կը խախտեն իրաւունքի եւ ժողովրդավարութեան հիմնարար սկզբունքները:

Այս անարդարութիւնն ու խտրական վերաբերմունքը կարելի չէ հանդուրժել: Կարելի բոլոր օրինական միջոցներով պիտի շարունակենք հետամուտ ըլլալ, որպէսզի սփիւքահայ մեր հայրենակիցներու ոտնահարուած իրաւունքները վերականգնին:

Յակոբ Տէր Խաչատուրեան
337 Բիւրոյի ներկայացուցիչ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՅԻՆ ԿՈՉԸ

Լինելով Արցախի Հանրապետութեան քաղաքացի եւ Ազգային ժողովի նախագահ՝ միշտ պայքարել եմ Արցախի Հանրապետութեան Նախագահի, Ազգային ժողովի եւ ուժային կառույցների՝ որպէս պետականութեան հիմք ներկայացնող ինստիտուտների (հաստատութիւնների - «Գ.») կայացման ու հզօրացման համար:



Անընդունելի է վերջին օրերին հանրային հարթակներում կեղծ համախմբման կոչերի քօղի տակ հանդէս եկող որոշ դեմքերի՝ մեր պետականութեան հիմքերի կազմաքանդման ուղղուած քայլերը:

Եւ Ազգային ժողովի նախագահի պաշտօնը ստանձնել եմ քաղաքացիական

Շար.՝ էջ 3 >

ԿՈՉ ՅԱՆՈՐԻ ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՇՊԱՆՄԱՆ

Երեքշաբթի օր Արցախի «Արդարութիւն» Կուսակցութիւնը, 337 Արցախի Կեդրոնական Կոմիտէն եւ Արցախի ժողովրդավարական Կուսակցութիւնը Արցախի ներքաղաքական կացութեան առնչուող միացեալ յայտարարութիւն մը տարածեցին:

Ստորեւ կը ներկայացնենք երեք կուսակցութիւններուն յայտարարութիւնը.

Սիրելի՛ հայրենակիցներ, Մեր անկախութեան հերթական տարեդարձին ընդառաջ մեր պետութիւնը յայտնուել է լրջագոյն փորձութիւնների առաջ:

Թշնամին տենչում է վերացնել մեր պետականութիւնը, լուծարել մեր պետական հաստատութիւնները եւ կլանել Արցախը: Պատերազմից յետոյ անցնող երեք տարիների ընթացքում, եւ յատկապէս, վերջին ամիսներին՝ շրջափակման պայմաններում, մենք ազգովի դրսեւորել ենք մեր պետականութեան շուրջ բացառիկ միասնականութիւն՝ զերծ պահելով պետութիւնը ցլցումներից, եւ ցուցաբերել ենք դժուարութիւնների հանդէպ անսախաղէպ տոկունութիւն: Այս ամէնը մենք արել ենք յանուն մեր պետականութեան, յանուն մեր հողի վրայ ազատ ապրելու եւ արարելու մեր բնատուր իրաւունքի:

Որքան էլ զարմանալի կարող է թուալ, բայց պետականութեան դեմ ուղղուած հերթական սպառնալիքը մենք ստանում ենք ոչ թէ թշնամուց, այլ իւրայիններից, մարդկանցից, որոնց մղումները հնարաւոր է, որ ազնիւ

Շար.՝ էջ 3 >



Խմբագրական

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐՈՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄԸ

(ՀՀ Անկախության Հռչակագրի 30-ամեակ)

23 Օգոստոս 1990-ին Հայաստանի Գերագոյն Խորհուրդի առաջին նստաշրջանը ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով Հայաստանի անկախության գործընթացին սկիզբը դրուեցաւ: Հռչակագիրը, որ կարելի էր իրաւական փաստաթուղթ էր անկախության ճանապարհին եւ կը նախանշէր Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային եւ այլ ոլորտներու մէջ զարգացման ուղիները, բաղկացած էր 12 կէտէ:

Հռչակագիրով հաստատուեցան Հայաստանի պետական խորհրդանիշերը, Հայաստանի արտաքին անկախ քաղաքականութիւն վարելու, տարբեր երկիրներու մէջ դիւանագիտական ներկայացուցչութիւններ ունենալու կարելիութիւնը, ինչպէս նաեւ տնտեսական, մշակութային, իրաւական կեանքը վարելու հիմնական պայմաններն ու ժողովրդավարութեան հաստատման տուեալները: Վերականգնեցան Հայ Առաքելական եկեղեցւոյ իրաւունքները եւ յատուկ յօդուածով մը անդրադարձ կատարուեցաւ 1915-ի Հայոց Ցեղասպանութեան եւ հայկական տարածքներու մասին: Հռչակագիրը հաստատեց նաեւ Հայաստանի վճռականութիւնը՝ Արցախը իր տարածքի անբաժանելի մասը ճանչնալու մասին: Փաստօրէն հռչակագիրը ծրագրային փաստաթուղթի մը համապատկերը դարձաւ:

Հայաստանի անկախութեան հռչակագիրին մէջ արտացոլացին հայոց պետականութեան հզօրացման եւ հայ ազգի իղձերու իրականացման հասնելու ուղիները:

Անկախութեան հռչակագիրը այլ խօսքով՝ մեր ազգին ու պետութեան ուղեցոյցը դառնալու կոչուած էր ու կը շարունակէ մնալ այդպէս՝ անկախ քաղաքական ներքին տարակարծութիւններէ, աշխարհաքաղաքական փոփոխական վիճակներէ:

Անոր մէջ մեր սերունդներուն վրայ սրբազան պարտք կը դրուի աշխատիլ ու պայքարիլ, ստեղծագործ միտք եւ ուժեղ բազուկ ունենալ՝ իրականացնելու մեր ազգային իղձերը ու դառնալու հզօր պետութիւն, միասնական ազգ:

Աշխարհաքաղաքական պայմանները կրնան փոխուիլ, պարտութիւնները կրնան վիատեցնել մեզ, սակայն պետութեան, հողին, ազգին, մշակոյթին տիրութիւն ընելու, պատմական մեր իրաւունքներէն չզիջելու իմաստութիւնը, արիութիւնը, գործելու կամքն ու ստեղծագործ միտքը բանելով կըրնան ուղղորդել մեր ազգի թէ երկրի ղեկավարները, մեր հաւաքական գիտակցութիւնը:

Թող անկախութեան հռչակագիրը ըլլայ մեզ միացնող, Սփիւռքի, Հայաստանի թէ Արցախի մէջ մեզ պետութեան ու ազգի պահպանման համար միասնական աշխատանքի մղող ուղեցոյց:


Հայաստանի եւ Արցախի ներկայ բարդ իրավիճակներուն մէջ հռչակագիրէն դուրս մտածել կը նշանակէ աշխարհագրական ներ ու նեղոցող տարածքի մէջ խեղդել պետութիւնն ու ազգը: Անկախ պետութիւն կերտելը արիութիւն կը պահանջէ, զայն պահելն ու զարգացնելը՝ հաւաքական իմաստութիւն ու ստեղծագործ աշխատանք:

«Գ.»

-Լաթաքիոյ ոստիկանատունէն աղբիւր մը յայտնեց, որ Լաթաքիոյ հիւսիսային արուարձանին մէջ կայք հաստատած գինեալ ահաբեկչական խմբաւորումներ 5 հրթիռներ արձակեցին Քրտահա շրջանի գիւղատնտեսական տարածքներու ուղղութեամբ, որուն հետեւանքով քաղաքացի մը վիրաւորուեցաւ:



-Չորեքշաբթի, 23 Օգոստոս 2023-ին, աւարտին հասան երկրորդական պաշտօնակազմի պետական աւարտական վերաքննութիւնները՝ գրական, գիտական եւ այլ ճիւղերով: Վերաքննութիւնները սկսած էին 10 Օգոստոս 2023-ին: Քննութիւններ յանձնելու ներկայացած էին 184.342 աշակերտ-աշակերտուհի:



-Սուրիոյ նախագահ Պաշարայ Ասատ հրապարակեց 2023-ի «216» թուակիր հրամանագիրը, որուն համաձայն Թարթուսի նահանգապետ Ապտուլհալիմ Խալիլի պաշտօնավարութիւնը կը դադրի, իսկ Թարթուսի նահանգապետ կը նշանակուի Ֆիրաս Ահմետ Համետ:



-2ինուոր մը վիրաւորուեցաւ եւ նիւթական վնասներ արձանագրուեցան Դամասկոսի արուարձանին վրայ իսրայէլեան յարձակումի մը հետեւանքով: 2ինուորական աղբիւր մը ՍԱՆԱ-ին յայտնեց, որ «21 Օգոստոսի գիշերուան ժամը 11:05-ին, Իսրայէլ սուրիական բռնազրաւուած Կուլանէն հրթիռներ արձակեց Դամասկոսի շրջակայքի գինուորական կարգ մը կէտերուն ուղղութեամբ: Աղբիւրին համաձայն. «Յարձակումին հետեւանքով գինուոր մը վիրաւորուեցաւ եւ նիւթական վնասներ արձանագրուեցան»:



-Սուրիոյ նախագահ Պաշարայ Ասատ հրապարակեց 2023-ի «19» թուակիր օրէնսդրական հրամանագիրը, որուն համաձայն բժշկութեան վերաբերող դեղորայքի հում նիւթ եւ արտադրութեան պահանջուած պիտոյքները մաքսային տուրքերէ զերծ պիտի կացուցուին:



ՀՀ ՍԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ...

Սկիզբ՝ 19 1

Մարդասիրական խումբի պատասխանատու գնդապետ Արկատի Տոնոյեան տեղեկացուց, որ Մօտաւորապէս 135.000 քմ. մէթր ականազերծուած տարածքէն յայտնաբերուած է 77 միւլոն պայթած գիւնամթերք, որ հայ սակրաւորներու եւ սուրիացի իրենց գործընկերներու համատեղ աշխատանքով ոչնչացուած է:

Այս առիթով, սակրաւորներու 12-րդ խումբէն անդամներ իրենց մասնագիտական պարտականութիւններն ու վերադասի կողմէ առաջադրուած խնդիրները ժամանակին եւ ճշդութեամբ կատարելու, ինչպէս նաեւ աշխոյժ գործունէութիւն ծաւալելու համար պատուոյ գիրքեր ստացան, իսկ ՀՀ պաշտպանութեան նախարարի հրամանագրով Արմեն Ռուբենի Օհանեան պարգեւատրուեցաւ «Վ. Սարգսեան» մետալով:

Գնդապետ Տոնոյեանի համաձայն, ականազերծման աշխատանքներու ընթացքին ոչ մէկ պատահար արձանագրուած է, իսկ 2019 թուականէն սկսեալ ՀՀ մարդասիրական ականազերծման խումբերը Հալեպ նահանգի մէջ արդէն աւելի քան 1.400.000 քմ. մէթր ականապատուած տարածք ականազերծած ու յանձնած են տեղական ինքնակառավարման մարմիններուն:

Գնդապետին խօսքով, Հալեպի մէջ մարդասիրական խումբի աշխատանքները շարունակական բնոյթ պիտի կրեն ու մասնագիտական նոյն հմտութեամբ պիտի ընթանան:

Լուրեր Հայաշխարհին

ԱՐՅԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՆԸ ԸՆՈՐՀԱԽՐԱԾ Ե ԶԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՍՈՒԹԵԱՆ ՀՐԳԱՎԱԳԻՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ 33-ԱՄԵԱԿԸ



Արցախի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահ Դավիթ Իշխանեան հեռաձայնային գրոյց ունեցած է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահ Ալեն Սիմոնեանի հետ: Դավիթ Իշխանեան շնորհակալութեամբ է Սիմոնեանը Հայաստանի Անկասկածելի Կառավարության հրահրակազմի ընդունման 33-ամեակին առիթով:

ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՅԱԾ Ե ՔԱՆԱՏԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՇԵՏ

ՀՀԴ Բիւրոյի Հայ Դատի Կեդրոնական գրասենեակը կը հաղորդէ, որ Քանատայի Հայ Դատի Յանձնախումբը 19 Օգոստոսին Մոսկուայի հայկական կեդրոնին մէջ հանդիպում ունեցած է Քանատայի արտաքին գործոց նախարար Մելանի Ժոլիի հետ: Հանդիպումի ընթացքին քննարկուած են Արցախի մէջ տիրող օրհասական կացութիւնը եւ քննարկուած են անվտանգութեան սպառնացող շրջակայքին խնդիրը:



Հայ Դատի Յանձնախումբին կողմէ վերստին շեշտուած է Արցախի Ժողովուրդի ազգային ինքնորոշման իրաւունքի իրագործման կարելորդութիւնը, այն ընդգծումով, որ ատիկա Արցախի Ժողովուրդի անվտանգ ու խաղաղ կենսագործունէութեան միակ երաշխիքն է եւ, որ Արցախը երբեք չի կրնար ենթարկուիլ Ատրպեյճանին ու դառնալ ցեղասպանութեան գոհ:

Հայ Դատի Յանձնախումբը Քանատայի արտաքին գործոց նախարարին ներկայացուցած է քաղաքական ու դիւանագիտական առաջնահերթութիւններու թղթածրար մը, որ Քանատայի կառավարութեան համար կրնայ օգտակար ըլլալ Արցախի մէջ ստեղծուած ճգնաժամի յաղթահարման գործին մէջ:

Իր կարգին, նախարար Ժոլի տեղեկացուցած է Սեպտեմբերին Հայաստանի Հանրապետութեան մէջ, իր մասնակցութեամբ, Քանատայի դեսպանատան պաշտօնական բացման մասին:

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ...

կան ուժերի համախոհութեան արդիւնքում: Համոզուած եմ, որ այդ համախմբումը միս ու արիւն է տալու պետականութեան պահպանման վեհ գաղափարին, որի լեզուով (օրինական - «Գ.») ներկայացուցիչներն են Նախագահի եւ Ազգային Ժողովի ինստիտուտները:

Բոլոր այն քայլերը, որոնք միտուած են սեպ խրելու եւ ընդհանրապէս պետական կառոյցների տարանջատմանն ու հակադրութեանը, բացառապէս թշնամանք են ստեղծում երկրի ներսում եւ շուրջ լցնում թշնամու ջրաղացին:

Վստահ եմ՝ այս ծանր օրերին ուժային եւ իրաւապահական կառոյցների ներկայացուցիչները գիտակցում են պետականութեան պահպանման գինն ու կարելորդութիւնը ու նրանց վստահուած մեր անվտանգութիւնն ու ներքին անդրրի պահպանումը:

Որպէս երկրի քաղաքական ղեկավարութիւնը ստանձնած երկրորդ դէմք՝ ինչպէս ժամանակին մարտի դաշտում անմասն չեմ մնացել պետականութեան ստեղծման գործընթացին, հաւատարիմ եւ հաստատակամ մնալով մեր նահատակների որդեգրած նպատակներին, գիտակցելով ներքին համերաշխութեան կարելորդութիւնը, պատրաստ եմ իմ բոլոր ուժերը ներդնել՝ համատեղ որոշումներ կայացնելու եւ այս իրավիճակից մեր հանրապետութիւնը նուազագոյն վնասներով դուրս բերելու ուղղութեամբ:

Որպէս օրէնսդիր մարմնի ղեկավար, համոզուած եմ, որ ԱՀ Ազգային Ժողովը կը ստեղծի բոլոր պայմանները՝ դառնալու ոչ միայն քաղաքական քննարկումների, այլեւ հանրութեան խնդիրները ներկայացնող եւ լուծումներ առաջադրող հարթակ:

Վստահեցնում եմ ձեզ, որ Ազգային Ժողովը պատրաստ է հիւրընկալել հանրութեան կառուցողական միտում ունեցող տարբեր շերտերի եւ պատրաստակամ է լսելու բոլորի կարծիքը եւ այն ներկայացնելու թէ՛ ԱՀ նախագահին, թէ՛ պատկան մարմիններին:

Համոզուած եղէ՛ք, որ այս ծանր կացութիւնից դուրս կը գանք մեր հաստատակամ, արդար, անմնացորդ նուիրուածութեան ու համերաշխութեան շնորհիւ:

Կոչ եմ անում բոլորիդ ցուցաբերել զգօնութիւն եւ զսպուածութիւն՝ ի շահ մեր երկրի ու ժողովրդի:

Դավիթ Իշխանեան
Արցախի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահ

Կոչ Յանուն ԱրՅԱՆԻ...

Սկիզբ՝ էջ 1
Են ու միամիտ, բայց դրանից սպառնալիքի բնոյթը չի փոխուում: Հայրենակիցներ, Այսօր, թերեւս, մենք յանձնում ենք պետականութեան հասունութեան մեր ամենակարեւոր քննութիւնը: Այս իրավիճակի անարիւն, իմաստուն, եւ ամենակարեւորը, ՕՐԻՆԱԿԱԿԱՆ հանգուցալուծումից է կախուած մեր ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ հետագայ ճակատագիրը: Եւ այն կախուած է ոչ միայն որոշումներ կայացնելու լիազօրութիւն ունեցող անձանց դիրքորոշումից, այլ նաեւ իւրաքանչիւրիս սրտացաւ ներգրաւուածութիւնից:

Հիմք ընդունելով վերոգրեալը՝ դիմում եմք. **Ուժային Կառոյցներին** Յարգելի՛ պարոնայք, բարձրաստիճա՛ն սպաներ: Մենք ըմբռնում եւ ողջունում ենք խնդիրը փափուկ ուժով եւ խաղաղ հանգուցալուծելու ձեր մօտեցումը: Միաժամանակ, յիշեցնում եւ պահանջում ենք՝ հաւատարիմ մնալ պետականութեան եւ նրա հաստատութիւնների պաշտպանութեան գործին տուած ձեր երդմանը, գործել բացառապէս Օրէնքի ոգուն եւ տառին համապատասխան:

Ազգային Ժողովի Զաղաքական Մեծամասնութեանը եւ Զաղաքական Այլ Ուժերին Յարգելի՛ գործընկերներ, Ազգային Ժողովը, ինչպէս եւ Նախագահի հաստատութիւնը, ժողովրդի հաւաքական կամքն արտայայտող պետական երկու հիմնասիւններն են, որոնցից իւրաքանչիւրի խարխումբը յղի է պետականութեան փլուզմամբ: Դուք՝ որպէս ժողովրդի ձայն, չէք կարող լուռ մնալ՝ սպասելով իրավիճակի կամայական հանգուցալուծմանը: Սահմանադրական կարգի պահպանումը եւ ձեր ստացած ձայներին տեր կանգնելը առաջնային խնդիրն է: Դուք պարտաւոր էք հրապարակային դիրքորոշում յայտնել եւ լինել պետականութեան պահպանման առաջին դիրքերում:

Նախկին Նախագահներին, Պետական Նախարարներին, Բարձրաստիճան Չինուորականութեանը Մեծարգո՛յ պարոնայք եւ զօրավարներ, Արցախի պետականութիւնն իր բոլոր թերութիւններով հանդերձ նաեւ ձեր ջանքերի, նուիրումի եւ վաստակի արդիւնք է: Դուք պարտաւոր էք գործադրել ձեր ողջ ազդեցութիւնը՝ իմաստութեամբ եւ խաղաղ հանգուցալուծելու ստեղծուած կացութիւնը: Դուք բարոյական պարտք եւ վաստակած իրաւունք ունեք լինելու պետականութեան պահպանման առաջին գծում:

Մտաւորականութեանը, Հասարակական Գործիչներին եւ Ողջ Հանրութեանը Սիրելի՛ գործընկերներ, քոյրեր ու եղբայրներ, Պետականութիւնը մեր ծնողների, հարազատների, գաւազների, ընկերների արիւնով վաստակած գերագոյն արժէք է: Մենք միշտ պատրաստ ենք եղել այն պաշտպանել ցանկացած թշնամուց մեր կեանքի գնով: Պետականութեան պաշտպանութիւնը ներքին հակառակութիւններից, անտեղի յաւակնութիւններից ու անիմաստ ցնցումներից պակաս կարեւոր չէ: Անտարբերութիւնը որեւէ արդարացում չի կարող ունենալ: Օրհասի պահին լուրջութիւնը յանցակցութիւն է:

Ձեր լռութիւնը չի հասկացուելու: **Մտաւորականութեանը, Հասարակական Գործիչներին եւ Ողջ Հանրութեանը** Սիրելի՛ գործընկերներ, քոյրեր ու եղբայրներ, Պետականութիւնը մեր ծնողների, հարազատների, գաւազների, ընկերների արիւնով վաստակած գերագոյն արժէք է: Մենք միշտ պատրաստ ենք եղել այն պաշտպանել ցանկացած թշնամուց մեր կեանքի գնով: Պետականութեան պաշտպանութիւնը ներքին հակառակութիւններից, անտեղի յաւակնութիւններից ու անիմաստ ցնցումներից պակաս կարեւոր չէ: Անտարբերութիւնը որեւէ արդարացում չի կարող ունենալ: Օրհասի պահին լուրջութիւնը յանցակցութիւն է:

Ձեր լռութիւնը չի հասկացուելու: **Մտաւորականութեանը, Հասարակական Գործիչներին եւ Ողջ Հանրութեանը** Սիրելի՛ գործընկերներ, քոյրեր ու եղբայրներ, Պետականութիւնը մեր ծնողների, հարազատների, գաւազների, ընկերների արիւնով վաստակած գերագոյն արժէք է: Մենք միշտ պատրաստ ենք եղել այն պաշտպանել ցանկացած թշնամուց մեր կեանքի գնով: Պետականութեան պաշտպանութիւնը ներքին հակառակութիւններից, անտեղի յաւակնութիւններից ու անիմաստ ցնցումներից պակաս կարեւոր չէ: Անտարբերութիւնը որեւէ արդարացում չի կարող ունենալ: Օրհասի պահին լուրջութիւնը յանցակցութիւն է:

ՀՀԴ ԱՐՅԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
«ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ» ԿՈՄՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԱՐՅԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՄՍԱԿՑՈՒԹԻՒՆ
Ստեփանակերտ
22 Օգոստոս 2023

Առաջնորդութիւն Բերիոյ Հայոց Թեմի
Ուսումնական Խորհուրդ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
2023 - 2024 տարեշրջանին համար
- Ազգային Մանկապարտեզը կարիքը ունի համալսարանաւարտ, մասնագէտ ուսուցչուհիներու:
- Ազգային Միացեալ վարժարանը կարիքը ունի հետեւեալ նիւթերը դասաւանդող համալսարանաւարտ մասնագէտներու.
- Անգլերէն,
- Արաբերէն,
- Ընկերային Գիտութիւն,
- Համակարգիչ:
Ինչպէս նաեւ հոգեբանական խորհրդատուի:
Մանրամասնութեան համար հեռաձայնել՝ 0932890929-0966463195:

ՄԱԿ-Ի ՆԻՍՏԻՆ ՄԱՍԻՆ՝ ԿԱՐԵՒՐ, ԲԱՅՑ ԱՆԲԱԲԱՐԱՐ



Ս. Մահաբեզեհան

Ի՞նչ ծնալ ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդի 9397-րդ նիստէն:

Մինչեւ ամբողջական տեղեկութիւններու մէկտեղումը, ստիպուած ենք աչքի առջեւ ունենալ այն մասնակի տեղեկութիւնները եւ տեղեկագիրները, ճառերը, որոնք կազմեցին Հայաստանի պահանջով 16 Օգոստոս 2023-ին գումարուած նիստին մասնակի պատկերը:

Նախ եւ առաջ քանի մը նկատողութիւն:

Նիստը տեղի ունեցաւ Միացեալ Նահանգներու ներկայացուցիչին նախագահութեամբ: Այժմու նրատաշրջանին նախագահը Միացեալ Նահանգներն է: Կարճ ճամ մը արտասանեց դեսպան Լինտա Թոմըս Կրինֆիլտ:



Հայաստանի դատին պաշտպանութիւնը վստահուած էր դիւանագիտութեան պետին՝ Արարատ Միրզոյեանի:

Տեղեկագիր մը ներկայացուց դանացի ծագումով դիւանագետ Էտեմ Վոսորնու, որ ՄԱԿ-ի մարդասիրական հարցերու մէկ բաժանմունքին համակարգող-վարիչն է:

ՔԻՉ ՄԸ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹԻՒՆ

Եթէ վերոյիշեալ ներկայացուցիչներուն եւ խօսք առնող այլ դեսպաններու արտայայտութեանց միջեւ հասարակ յայտարար մը որոնենք, նկատելի էր, որ ընդհանուր ամամբ ուղղակի եւ անուղղակի քննադատութիւններ ուղղուեցան Ատրպէյճանին, շեշտելով, որ ան փակ կը պահէ Լաչինի ճամբան, մարդկային աղետի պատճառ կը դառնայ, պետք է անյապաղ վերաբանալ կենսատու այդ ուղին, անսայ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարին, Լա Յէյի Միջազգային ատենակի եւ այլոց կոչերուն ու նոյնիմաստ պահանջներուն: Մէկ խօսքով, անատամ բաներ:

Մանրամասնութիւններ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ դեսպանը հարցին մօտեցաւ մարդկային տագնապի դիտանկիւնէն. սնունդի պակաս, անհատներու իրաւունքներ եւ ապահովութիւն, վեր առաւ Միջազգային Կարմիր Խաչի մարդասիրական առաքելութիւնը՝ շուրջ 700 հիւանդներու փոխադրում: Յետոյ շեշտեց, որ Հայաստան եւ Ատրպէյճան պետք է խաղաղօրէն բանակցին, ինքնագաղտմի դիմեն (յըստակ էր, որ երկուքին միջեւ հաւասարութիւն մը կը գծուէր ոճրագործին եւ զոհին միջեւ...), նաեւ այն՝ որ Պաքու եւ Ստեփանակերտ պետք է ուղղակի բանակցութիւն բանան: Ո՛չ մէկ քննադատութիւն կամ դատապարտանքի խօսք՝ Ատրպէյճանի ոճրային արարքներուն մասին, այլ նաեւ եզրափակում, թէ Ուաշինկթըն յանձնառու կը մնայ խաղաղութեան երկկողմանի եւ բազմակողմանի ճիգերուն:

ԷՏԵՄ ՎՈՍՈՐՆՈՒ տեղեկագիրը քիչ մը անելի՛ քննադատական երանգ ուներ Ատրպէյճանի հասցեին: Ան հաստատեց, որ սննդանիւթի, դեղի, ուժանիւթի եւ այլ կենսանիւթերու տագնապ կայ (հոս ալ շեշտը մարդկային հարցերու վրայ), անցնուց, որ իր կազմակերպութիւնը «անկախօրէն չէ կըրցած հաստատել» այս տագնապներուն ամկայութիւնը, որովհետեւ Ատրպէյճան մօտաւորապէս 3 տարիէ ի վեր կ'արգիլէ ներկայացուցիչներու շրջան մուտքը: Ան ալ խօսեցաւ Միջազգային Կարմիր Խաչի մարդասիրական առաքելութեան եւ դիմագրուած դժուարութիւններուն մասին, շեշտեց, որ պետք է երթել եկի ապահովման ձեւեր գտնուին եւ ակնարկութիւններ ըրաւ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարին եւ Լա Յէյի ատենակի պահանջներուն:

ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԵԱՆԻ ճառը այլապէս ուշագրաւ էր: Ան քանիցս շեշտեց հարցը բազմակողմանի ճիգերով եւ ո՛չ թէ միակողմանի դասաւորումներով հետապնդելու ընտրանքին (պետք է հասկնալ, որ միակողմանի ըսելով՝ ըսել կ'ուզէր, որ Ատրպէյճան կամայական եւ ինքնագաղտմի քայլեր կ'առնէ), յետոյ յիշեցուց Հայաստանի յանկերգը, թէ՛ ճիգ կ'ընէ խաղաղութեան հասնելու համար, առանց մոռնալու կրկնուող խրատը, թէ Արցախը պետք է բանակցի Ատրպէյճանի հետ. յետոյ մանրամասնօրէն խօսեցաւ Ատրպէյճանի (առանց բառը գործածելու) ոճիրներուն մասին, որոնց հետեւանքով՝ բնակիչներուն վիճակը կը վատթարանայ, ցեղային մաքրագործումի վտանգ կայ, Լեռնային Ղարաբաղի բնակիչները մատուած են դարձանապատիւ կացութեան, մարդկային իրաւունքները չեն յարգուիր:

Միրզոյեանի ճառին մէջ խարանող էին փաստերը՝ սովամահութեան եւ մարդկային աղետի տանող վիճակները, Հայաստանէն կենսանիւթերու Արցախ չհասնիլն ու հետեւանքները: Թիւերով եւ թուականներով ներկայացուց վերջին տարիներու գագաթնային իրադարձութիւնները, պատերազմէն ետք գարգացումներ, Լաչինի ճամբու փակման փուլերը եւ մարդկային տագնապը ծանրացնող դէպքեր, որոնք կը հետապնդեն ցեղասպանական նպատակ, յիշեցուց Միջազգային շրջանակներէ Ատրպէյճանի ուղղուած կոչերն ու պահանջները: Ան եզրափակեց ըսելով, որ պետք է նոր ցեղասպանութիւնը կանխարգիլել, եւ ոչ թէ հարցը դիտել օր մը զանոնք ոգեկոչելու մօտեցումով:

Առաջին ակնարկով, Հայաստանի ներկայացուցիչին խօսքը բաւական խիստ դատապարտանք կը բովանդակէր Ատրպէյճանի հասցեին, սակայն

եթէ քիչ մը քննական աչքով դիտենք, յստակ է, որ ան ալ հարցին կը մօտենար առաւելաբար մարդկային տագնապի մը ակնոցով, այնպէս, ինչպէս պիտի ընէր, օրինակի համար... Տարֆուրի, Ուքրանիոյ, Նիճերի եւ տագնապահար այլ շրջաններու ժողովուրդներուն ՄԱՐԴԿԱՅԻՆ ՏԱԳՆԱԳ դիմագրուելու դիտանկիւնէն: Անոր խօսքերուն մէջ անուղղակի կրկնութիւններ կային ՄԱԿ-ի տեղեկագրողին եւ ամերիկացի դեսպանին խօսքերուն կարգ մը բաժիններուն: Կրկնեց եզրակացնել, որ Միրզոյեան կրնայ «պրաւ» մը շահիլ՝ «անկողմնակալ դիտողներէ», սակայն վերջին հաշուով, անոր պաշտպանողականը, Ատրպէյճանի ուղղուած քննադատութիւններն ու ՄԱԿ-էն սպասումները կարելի է սեղմել ուսողութեան ու գիտութեան մէջ ծանօթ բանաձեւումով մը. «Կենսական, անհրաժեշտ բայց ոչ բաւարար» (Necessary but not sufficient!):

Ուշադիր ունկնդրութիւն մը եւ բնագիրներու ընթերցումը նաեւ ցոյց կու տան, որ անուղղակի դատապարտում կայ ռուս խաղաղապահ ուժերուն հասցեին եւ հողի պատրաստութիւն՝ միջազգային անելի լայնածիր միջամտութեան մը համար...

ԱՅՆ ԿԱՐԾԻՔՆԵՐ ԵՒ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Նշեցինք, որ արտայայտութեանց մէջ գերակշռող՝ արցախցիներու ՄԱՐԴԿԱՅԻՆ ՏԱԳՆԱԳ ՄԸ դիմագրուելն էր եւ կրկնութիւնը Լաչինի ճամբուն վերաբացման պահանջներուն: Եղան նաեւ ազերիական քմահաճոյքին տուրք տուողներ, որոնք խօսեցան Աղտամի ճամբուն բացման ընտրանքին մասին:

Մեր այս սիւնակին նպատակը նիստին մանրամասն տեղեկագրումը չէ, այլ հպանցիկ այս նշումներով՝ կ'ուզենք անգամ մը եւս կանգ առնել ՄԱԿ-ի եւ նմաններու այն յանցաւոր կրաւորականութեան առջեւ, որ նորութիւն չէ, իսկ անելին սպասելու համար, անելի քան անյետաձգելի է հատու, անելի՛ ուժական քայլերու որդեգրումը:

Ապահովութեան Խորհուրդի նիստը տեղի ունեցաւ դատապարտելի եւ յանցաւոր կրաւորականութիւն ցուցադրող դէպքերու ենթապատկերին առջեւ: Յիշատակենք Նորագոյններէն մէկ քանին:

Տարօրինակ բանաւէճ մը ծագեցաւ Եւրոպական Միութեան դէտերուն եւ Հայաստանի Պաշտպանութեան նախարարութեան միջեւ. ազերիները կրակեցին դէտերուն վրայ, պաշտպանութեան նախարարութիւնը հրապարակեց համապատասխան հարդրագրութիւն, դէտերը ըսին, որ նման դէպք չէ պատահած, յետոյ հաստատեցին թէ թիրախաւորութեան են, սակայն գոհվեցան չկայ: Գնա՛, հասկցի՛ր, թէ ինչպէ՛ս կրնաս նման հերքում ընել, երբ դուն ես թիրախաւորուածը: Հաւանաբար դէտերը Պաքուէն կանխա՛յայտեցին, վստահ ըլլալու՝ որ նման հաստատում որեւէ հետեւանք պիտի չուներ: Ի դէպ, եթէ զոհ կամ վնաս արձանագրուէր, բան մը պիտի փոխուէ՛ր: Աշխարհի այս կամ այն տաք կետին վրայ բազմաթիւ դէտեր զոհ գացած են կամ վիրաւորուած: Հարցուցէ՛ք, օրինակի համար, ՖԻՆԻԼը հիւրընկալող լիբանանցիներուն...

Ա. Խ. նիստէն կարճ ատեն մը առաջ, ազերիները հայ զինուոր մը առեւանգեցին կրկնուող զրպարտանքներով: Ատրպէյճանի բանտերուն մէջ մնացող գերի զինուորներուն հարցը մոռցուած է (իսկ անոնք վստահաբար վրճարած են ՉՆԵՐԵՓ Փաշինեանի, որ անելի քան 2 տարի առաջ կը հաւաստէր, թէ մէկ-երկու ամիս բանտը մնալով՝ պիտի ներեն), պատանդներու թիւը նոր ուստումներ կ'արձանագրէ: Արդեօք «տակից» խօսակցութիւններ կը տարուին, որպէսզի ազերի ոճրագործներու հետ փոխանակութիւն մը սարքուի...

...Հայաստանի մէջ կենսքը «բնականոն կերպով» կը շարունակուի, եւ ինչպէս հեքիաթներու մէջ կ'ըսուի, «անոնք ապրեցան երջանկիկ»: Փա՛ստ կ'ուզէք. կամաւարութիւնը, ժողովուրդը մտահոգութեան եւ ցանկը ձեռք առնելու դիտանկիւնէն, պատրաստած է ցանկը օտար երգիչներու եւ «Շօ պիզնետ»-ի մարդոց, որոնք Հայաստան պիտի բերուին կառավարութեան պիւտեճէն յատկացումներով. խօսքը միլիոնաւոր տոլարներու մասին է: Պետք կայ՝ յիշեցնելու, որ նման ձեռնարկներ ժողովուրդը քննադատելու, անոր ուշադրութիւնը էական հարցերէն հեռացնելու կը ծառայեն:

Քանի մը օր առաջ, պատկերասփռուած հարցազրոյցի մը պահուն, քաղաքական գործիչ մը արդարօրէն նշեց, որ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի հետ ամբէն գնով, արժանապատուութեան, իրաւունքներու, հողի եւ հայրենիքի կորուստներու՝ գնով խաղաղութիւն հետապնդելու փաշինեանական խլմբակին մոլուցքը տարօրինակ է, որովհետեւ ո՛չ Ատրպէյճան, ոչ ալ Թուրքիա տրամադիր են երեւանցիներու ցանկացածին սահմաններուն մէջ խաղաղութիւն հաստատելու, այլ անոնց նախապայմանը յստակ է. շրջանի քարտէզը՝ առանց Հայաստանի եւ հայկական պետութեան, իսկ եթէ ունենք որոշ ատեն մը ընդունիլ թրքական տիրապետութեան տակ գոյութիւն քաշքշել, շուտով կրնանք հասնիլ Նախիջեանի եւ նման շրջաններու հայերու ճակատագիրին:

Ախտաճանաչումը մեր յիշողութեան մէջ արթնցուց գուարճալի անելի դոտ մը (թէեւ մեր վիճակը կատակ չի վերցնէր): Հոգեկան հիւանդ մը հոգեբուժի մը դիմէր է, ըսելով, որ հաւերէն կը վախնայ, որովհետեւ ինքզինք ցորենի հատիկ կը կարծէ, ամէն անգամ որ հաւ մը տեսնէ, փախուստ կու տայ, որպէսզի զինք չուտէ: Հոգեբուժը երկար ատեն փորձած է դարմանել ջլախտաւորը, թէ՛ ինք հատիկ չէ, պետք չունի հաւերէն վախնալու: Դարմանումը արդիւնք տուէր է եւ մարդը ըսէր է. այլեւս հաւերէն պիտի չվախնամ: Հոգեբուժը գոհունակութեամբ շնորհաւորէր է ապաքինած մարդը եւ գայն ճամբու դրէր: Ժամ մը ետք, մարդը սարսափահար վերադարձեր է դարմանատուն, թէ՛ հաւ մը տեսնէ ինկած է: «Բայց չէ՛ որ համոզուեցար, թէ դուն հատիկ չես ու պետք չունիս հաւերէն վախնալու», յիշեցուցէր է հոգեբուժը: «Ես համոզուեցայ, սակայն հաւը լուր ունի», հարցուցէր է գարիւրած մարդը...

ԽԱԶՊԱՆՑ



Գրիգոր Տունկեան

2013-ին Ֆերման Թորոսլարի թրքերենով հեղինակած «ԱԶ-ՄՈՐ», ամբողջական վերնագրով «Ապստամբության Բովեն Անցած Մութքեցի Հայ Ընտանիքի Մը Պատմությունը» գիրքին «Արեւմտահայոց հարցերու ուսումնասիրության

Գայիանէին կողմէ, որպէս ծայտեալ Հայեր ապրած տարիներուն իրենց արտայայտութիւններուն մէջ գուշաւորութեան համար նոյնիսկ սեփական ընտանիքէն ներս խօսակցութեան ընթացքին հայկականութեան թէ քրիստոնէութեան ակնար-

ապրելու իրավիճակներուն: Այլապէս կարելի է ըսել թերեւս, որ իսկ 1915-էն ետք շարունակուած Յեղասպանութեան պատմութիւնն ու Հայ ինքնութեան պահպանման կամքը, թէկուզ երկար տարիներ ծայտեալ ապրելու ծանրագոյն պայմաններ յաղթահարելու ստիպողականութեամբ:

Նորատիպը ներշնչագրութիւն մը ըլլալէ շատ անդին Յեղասպանութենէն մինչեւ մեր օրերը շարունակուող ամենէն երկար հերոսամարտի պատմութիւնն է, որ տեսերիզի մը նման հեղինակին հաղորդականութեան շնորհքով համեմուած, լայն դիտանկիւնով, իւրաքանչիւր հատուածի ընթերցումին հետ կը պատկերանայ մեր աչքերուն առջեւ: Գործողութիւններու դաշտը միայն հեղինակին ծննդավայրը չէ, այլ բռնագրաւուած համայն Արեւմտահայաստանն է, իսկ գործող հերոսը միայն Թորոսլար ընտանիքը չէ, այլ բռնի թրջացման դէմ անդու պայքարող իրաւագրկեալ մեր ժողովուրդի այն հատուածը, որ երկիր մտալով հանդերձ դարձաւ քստորական, արմատախիլ, քեմալական հանրապետական Թուրքիոյ վերաբնակեցման որոշումներով, չսպանուեցաւ ուղղակի, բայց անոր պարտադրուեցաւ կրօնափոխ դառնալ. երբեմն այդ մէկը կատարուեցաւ հասնելով մինչեւ թրջացման, պետական փաստաթուղթերու մէջ, առանց իսկ ենթականերուն գիտութեան ակամայ, բռնի համաթրջացման Ֆերմաններով (իրահանագրքերով) գողցուեցաւ անոր ազգային պատկանելիութեան իրաւունքը, մինչեւ իսկ փոխուեցաւ անունը, իր ինքնութիւնը: Ապրեցաւ ծայտեալ, բայց պահեց հայ ըլլալու գիտակցութիւնը իր ետեւէն մէջ, հակառակ զայն իրմէ խլելու թուրք պետութեան հետեւողական բռնամիջոցներու կիրարկու-

մին, չենթարկուեցաւ իր հողը կեղեքողին եւ հնարաւոր բոլոր միջոցներով տարերային կերպով դիմադրեց թրջացումին, մինչեւ իսկ ճնշեալ այլ փոքրամասնութիւններու կողքին մասնակից դարձաւ ցեղասպան բռնակալին դէմ ծագած ապստամբութեան: Տեսաբար մերժելով ցեղասպանի հետ գործակցութեան ուղին, մինչ այսօր ումանք ընտրած են զայն կամովին:


Հատորին հեղինակումը խիզախութիւն է, թրքերէն բնագրին Արաս հայկական հրատարակչատան կողմէ Կոստանդնուպոլսոյ մէջ հրատարակութիւնը յանդուգն նախաձեռնութիւն է: Աջտորը համայն Թուրքիոյ մէջ ծայտեալ հայերու շարունակուող հերոսամարտի-վաւերական նորագոյն փաստագրումն է, իսկ «Արեւմտահայոց հարցերու ուսումնասիրութեան կեդրոն»-ին կողմէ արագ արձագանգով զայն արեւմտահայերէնի թարգմանելու իրագործումը մեր ներագային բնագաւառին մէջ համադրուած ու նպատակային աշխատանք ծաւալելու ունակութեան եւ կարելիութիւններու առկայութեան վերոյիշեցումն է:

Լեզուի մասնագետ ըլլալով հանդերձ, չեմ կրնար չդրուատել թարգմանութեան դիւրահաղորդ լեզուն:

Համացանցի նիւթերով հեղեղուած մեր օրերուն մէջ օգտաշատ ու հաճելի ընթերցում կը ցանկան բոլոր գրքասերներուն:

Ազգային Պահանջատիրութեան նուիրական գործին մէջ հաշուառելի գործօն է երկիր ապրող մեր ժողովուրդի պայքարունակ այս հատուածը, որուն մարդկային, տարրական իրաւունքներու ապահովման եւ ազգային ինքնութեան պահպանումին սատարելու բարոյական պարտաւորութիւնը ունինք ազգովին:

Արագի երկու ափերուն երկիրն է մեր սուրբ:



կեդրոն»-ի գործակցութեամբ եւ օգնութեամբ Մարի Մերտիսանեան Եարալեանի կողմէ արեւմտահայերէնի թարգմանուած եւ Լուսակն հրատարակչատունէն-Երեւան 2022-ին լոյս տեսած գիրքին ընթերցումը անարտեցի: Արտասովոր փափաք մը մղեց զիս մինչեւ գիրքին Երեւանէն աշխարհի չորս ծագերը ուղարկուելով հանրութեան լայն զանգուածներուն հասանելի դառնալը գոնէ բովանդակութեան մասին մամուլով իրագեկելու ընթերցասերները՝ նախաճաշակ մը տալով այս նորատիպին մասին: Հեղինակին ծնողներուն՝ Ղազարին եւ

կելու համար գործածած բառամերթընէ փոխ առնելով «խաչպանց» բառը վերնագիր ընտրեցի:

Ինչպէս յաջողած էին բառի մը մէջ խտացնել պատմութիւն, հաւատամք, ինքնութիւն եւ տասնամեակներ գոյատեւած անկտրում կամք: Հեղինակը սեփական ընտանիքի գոյերթին պատումով վաւերական փաստագրումը կը կատարէ Յեղասպանութեան տարիներուն զանազան ձեւերով երկիր մտալ յաջողած հատուկեւտ հայերու վիճակուած ճակատագրին, սեփական երկրին մէջ ըլլալով արմատախիլ, քստորական եւ ինքնութենէ գուրկ

ԵԱԳՈՒՊԻԷԻ Ս. ԱՆՆԱՅԻ...

Սկիզբ՝ էջ 12

ըը՝ Ս. Կոյս Մարիամը, որ տաճարին մէջ հասակ առնելով ամբողջ իր կեանքը աստուածային կենդանի ներկայութեամբ թրծեց, օր ըստ օրէ եօթնարբեան շնորհներով զարդարուեցաւ եւ հանդէս եկաւ որպէս Աստուծոյ ատակ անօթը:

Մակար սրբազան Ս. Աննայի տօնին հրաւիրեց ուխտաւոր ժողովուրդի գաւակները, իրենց անձերը ինքնաքննութեան ենթարկելու, գիտնալու համար, որ դժուարութիւնները դիմագրաւելու համար ի՞նչ կերպ հաւատքի պայքար կը մղեն եւ որքա՞նով աղօթական կեանք կ'ապրին: Հետեւաբար, Ս. Աննայի հրաշափառ տօնին, սրբազան հայրը յորդորեց հաւատացեալները, որպէսզի սուրբերուն բարեխօսութիւնը խնդրելով, Աստուածամոր նման անձնորդի եւ անանձնական սիրով ապրին, իրենց ետք փշրեն եւ ընդհանուրին շահը գերադասելով իրենց անձնական շահէն՝ օրհնութիւն եւ բարիք դառնան շրջապատին, ազգին եւ եկեղեցիին:

Սրբազան հայրը Ս. Աննային

բարեխօսութիւնը խնդրելով աղօթեց, որ Ամենակալը խաղաղութիւն հաստատէ ողջ աշխարհին եւ Սուրիոյ մէջ, պահպանէ հզօր բանակը, իմաստութիւն շնորհէ երկրի վսեմաշուք նախագահին եւ պատասխանատուներուն, իր հովանիին տակ պահէ մեր ընտանիքները, երիտասարդներուն գործի յաջողութիւն պարգեւէ եւ հիւանդները բժշկէ:

Մակար սրբազան շնորհաւորեց Աննա անունը կրողները, ինչպէս նաեւ Աստուածամոր առնչուող անուններ կրողները եւ բարօր օրեր մաղթեց բոլորին: Ան գնահատեց Եազուպիէի Հայրենակցական Միութեան անդամները, որոնք քաղցր մտայնացումը ունեցան մատաղօրինէք կատարելով յիշատակելու Ս. Աննայի ուխտի օրը: Ան գնահատեց նաեւ հայր սուրբը, Սրբ. Զառանկից Մանկանց Մայր եկեղեցւոյ քահանայ հայրերը, թաղական խորհուրդը, դպրաց դասը, դպրապետը, տիկնանց եւ աղքատախնամ մարմինները, որոնք նուիրաբար կը ծառայեն եկեղեցւոյ:

Յաւարտ Ս. եւ Աննահ Պատարագին, սրբազան հայրը թափօրով ուղղուեցաւ դէպի եկեղեցւոյ շրջափակ, ուր հոգեհանգստեան պաշ-

տօն կատարուեցաւ: Այնուհետեւ, սրբազան հայրը ուխտաւորներու ներկայութեան մատաղօրինէք կատարեց: Միութեան անդամներուն պատրաստած անանդական Հարիսան օրհնուեցաւ եւ բաժնուեցաւ ներկաներուն: Ժողովուրդին բաժնուեցաւ նաեւ Ազգ. Կրօնական Ժողովին կողմէ պատրաստուած Աստուածամոր պատկերը եւ աղօթք բովանդակող բացիկներ:

ԱՄՆ-ՊՈԻԹԻՆԸ...

Սկիզբ՝ էջ 12

խաղաղութիւն հաստատէ Հայաստանի, Արցախի եւ ծննդավայր Սուրիոյ մէջ:

Պատարագէն ետք, սրբազան Հայրը թափօրով ուղղուեցաւ դէպի եկեղեցւոյ շրջափակ, ուր հոգեհանգստեան արարողութիւն, ապա նաեւ անանդական խաղողօրհնէք եւ մատաղօրինէք կատարեց: Ներկաները հոգեպէս ներշնչուած երգեցին «Կիլիկիա» մաղթերգը:

Աւարտին, Մակար սրբազան եկեղեցւոյ սրահէն ներս մտերմիկ հանդիպում ունեցաւ տարածաշրջանի գիւնուորական պատասխա-

նատուներուն եւ ժողովուրդի գաւակներուն հետ, որոնք սիրոյ սեղանի շուրջ համախմբուեցան: Դպրաց դասը եւ ներկաները երգեցին հայրենասիրական եւ ազգային երգեր:

Գիւղապետ եւ եկեղեցւոյ թաղական խորհուրդի ատենապետ Վահէ Արեճան խօսք առնելով բարի գալուստ մաղթեց սրբազան հոր: Ան յայտնեց, որ յետ պատերազմին, Սուրիոյ թէ արտասահմանի մէջ ապրող Ղնեմիի գաւակներուն նուիրատուութեամբ եւ աշխատանքով կիսաքանդ եկեղեցին եւ սրահը վերանորոգուեցան եւ Ղնեմիի բնակչութիւնը կրկին անգամ արժանի դարձաւ Ս. Աստուածածնայ վերափոխման տօնը յիշատակելու:

Սրբազան հայրը գնահատեց Ղնեմիի հոգեւոր հովիւը, թաղական խորհուրդը, դպրաց դասը եւ ժողովուրդի գաւակները, որոնք միասնաբար հաւատքով եւ նուիրուածութեամբ եկեղեցին եւ սրահը վերանորոգեցին եւ Ղնեմի աւանը վերապայծառացուցին:

Յիշենք, որ նախորդ օրը, քահանայ հայրը աղօրհնէք կատարեց, որմէ ետք կատարուեցաւ գառազեւումը եւ ընթացք առաւ մատաղի պատրաստութեան աշխատանքը:

Երիտասարդական Ոսպնեակ

ԱՌՈՂՋ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



Սարին Գրիգորյան

Ինձի գարմանալի կը թուին այն անձերը, որոնք ընկերային կեանքը հեռու մնալը սկզբունք դարձուցած են, չեն ուզեր ընտելանալ շրջապատին: Չեմ կրնար պատկերացնել, թե ինքզինք հարազատներէ հեռու պահողը ինչպէ՛ս կրնայ ուրախ եւ շէն կեանք մը ապրիլ:

Հաւանաբար այսպիսիներուն համար դժուար է առողջ յարաբերութիւն մշակելը: Քանի որ, իմ կարծիքով, առողջ յարաբերութիւնները շատ բան կը պահանջեն մեզմէ: Կը պահանջեն ուրիշներու հանդէպ ներողամիտ ըլլալ եւ աչք խփել անոնց կարգ մը թերութիւններուն, որպէսզի կարենանք պահել ընկերային յարաբերութիւնը: Ընկերային առողջ յարաբերութիւն մշակելու համար զգոյշ պէտք է ըլլալ, չնուստացնել դիմացինը, ինչ ալ ըլլան անոր թերութիւնները: Ընկերութիւնը ճիգ ու ազնուութիւն կը պահանջէ, որպէսզի յարաբերութիւնը ըլլայ թափանցիկ ու մենք վստահութիւն ներշնչենք մեր ընկերոջ, ինչպիսի անձ ալ ըլլայ ան՝ պաշտօնի վրայ թէ



առանց պաշտօնի, ուսեալ թէ անուս, մեր միջավայրին ծանօթ թէ նոր ծանօթութիւն հաստատող: Վերջին պարագային անդրադառնալով աւելցնեմ, որ երբ ընկերութեան մէջ նոր յայտնուողը ինքզինք օտար զգայ եւ չկարենայ մթնոլորտին ընտելանալ, փորձենք օգնել անոր:

Ես ալ նման կացութեան մէջ յայտնուած եմ: Երբ 10-րդ կարգ հասայ, ստիպուեցայ այլ դպրոց յաճախել, ետին ձգելով նախկին դպրոցս ու դասընկերներս: Այս նոր միջավայրին մէջ որեւէ ծանօթ չունէի: Բարեբախտաբար շատ մեծ ջերմութեամբ ընդունեցին զիս նոր դասընկերներս, որոնք ժամանակի ընթացքին դարձան մտերիմ ընկերներ: Հետեւաբար, ամեն անգամ երբ նշմարեմ նոր անձ մը, որ ինքզինք հեռու կը զգայ մեր միջավայրէն՝ կը փորձեմ ընկերանալ անոր, որպէսզի օգնեմ յաղթահարելու նոր շրջանակին հետ ընտելանալու իր դժուարութիւնը:

Շատեր կ'անարգեն դիմացինը, նոյնիսկ եթէ ան յարգալից վերաբերմունք ունենայ եւ փորձէ դրական ու գործակցող ըլլալ: Անկա մարդոց բարոյութիւններուն կը վերագրուի: Երբ չեն գիտեր յարգել, ընկերանալ, հաւանաբար ներքին դժուարութիւն մը ունին ու ատիկա պահել կը փորձեն, սակայն անզգալաբար ի յայտ կը բերեն այդ բարոյոյթը ուրիշը արհամարհելով:

Երբ նման բացասական անձերու հանդիպինք, ջանանք ըլլալ դրական ու աշխատիք պահել մեր ընկերական միջավայրի համերաշխութիւնը, կարեւորութիւն չտալով նման անհատներու բացասական արտայայտութիւններուն: Օրերու ընթացքին այսպիսիները կամ պիտի մեկուսանան կամ ալ իրենց վերաբերմունքը պիտի փոխեն ու սորվին յարգել դիմացինը:


Եագուպիէ...

Սկիզբ՝ էջ 8

րակից շրջանները, Եագուպիէի մէջ գտնուող ազգապատկան եկեղեցիներն ու կալուածները: Սուրբ Հռիփսիմէն ու մանաւանդ Սուրբ Աննա եկեղեցին բաւական լուրջ կորստաբեր հետեւանքներ ունեցան, ողբալի վիճակ ունի պատմական Սուրբ Աննայի սրբատեղին, քանդուած է խորանը, փլուզումի վտանգի տակ են արեւմտեան պատը, եկեղեցւոյ սիւներն ու գանգակատունը:

Սուրբ Աննա եկեղեցին անմիջական վերականգնումի կարիքը ունի, շինարարական առաջնահերթ եւ հրամայական ամրացումներու, շինարարական անյետաձգելի աշխատանքներու կը կարօտի եկեղեցւոյ ամբողջական կառոյցը: Յետնցումներու պատճառով աւելի նուազ տուժած է Սուրբ Հռիփսիմէ եկեղեցին, որ դարձեալ շուտափոյթ խնամքի կարօտ է: Նման պարագայի օժանդակութիւնները առաւել եւս կը խոչընդոտուին իրաւատէր պետութեան անտիրակալութեամբ: Իտլիպ նահանգը ընդհանրապէս եւ Եագուպիէի ազգապատկան կալուածները մասնաւորապէս այսօր սուրիական գերիշխանութեան սահմաններէն հեռու են, այդ տարածքները տակաւին անհասանելի են պետական գերիշխանութեան, մանաւանդ որ այդ կալուածները հեռու են իսկական իրաւատէրերու խնամատիրութենէ՝ Բերիոյ Հայոց Թեմէն: Ներկայիս անկարելի է, նոյնիսկ արկածներով լեցուն ու վտանգաւոր՝ օգնութեան համար հոն հասնիլը:

Երկրաշարժի քանդիչ հետեւանքներուն գումարած, տեղահանութեան եւ իսլամական ծայրայեղականներու, ահաբեկչական խմբաւորումներուն կողմէ արաբ ու թուրքմէն ընտանիքներու բնակեցումը, արտերու եւ կալուածներու տիրակալութեան անյայտ վիճակը, սպառնացող գոյութեանական վտանգները, լայնցուցած են Եագուպիէիցիներու յուսախաբութեան տրամագիծը եւ հիասթափութեան սրտնեղիչ թախիծը: Արհաւիրքի, մարդածին եւ բնածին տառապանքը, նիւթական եւ հոգեբարոյական ցաւալի իրադարձութիւնները կը շարունակուին, պատահած դժբախտութիւնները կը լրացնեն ողբերգական օղակը: Աքցանի մէջ առնուած է Եագուպիէն: Ո՞վ պիտի ըլլայ ազգապատկան կալուածներով եւ հայկական հետքերով Եագուպիէն ազատագրողը, պաշտպանողը:



Եագուպիէի մէջ ապրուած օրերէն քաղուած յուշ-պատումներէն լուսամուտ մը բանալով, նախորդ եւ յառաջիկային ծրագրուած մանրապատումներու շարքը կը նպատակադրէ վերապրեցնել տասնամեակներ առաջ հոն ապրած մեր յիշատակները, որոնք կը ցուցնեն մեր ապրումներուն վկայութիւնները, այդտեղ բնակուած կէս դարու կեանքի մը իրականութեան որոշ երեւոյթները ժամանակագրող պատկերներով, ուր իւրաքանչիւր բառ շոյանք էր: Ապրուած օրերու յիշատակները այդ ժամանակին պատկանող յուշեր են, որոնք՝ լոյս, շէշտ եւ անաղարտութեան հրապոյր մը ըլլալով հանդերձ, անցեալի գոյավիճակի հարազատ վկայութիւններ եւ լուսաբանող յետախոյզներու նկարագրութիւններ են:

Եագուպիէի մէջ ազգապատկան կալուածներու, արտերու, ստացուածքներու նեղափոխումը, ապագայի մշուշապատ հորիզոնի անորոշ վիճակը, անբացայայտ ճակատագիրը, ձեռով մը անյայտ վախճանը, անծանօթ եկուորներու կողմէ այդ հողերուն տիրակալութիւնը, կերպափոխումը գիւղի նոր սերունդներուն համար անվերադարձ կորուստի մը տիրապետելու ուրուականը կը պատկերեն, մտախաբութիւն դառնալու չափ ընդվզում եւ պոռթկում կը յառաջացնեն, թէ՛ սեփական եւ թէ՛ ազգապատկան բոլոր կորուստներով:

Եագուպիէի եւ յարակից շրջաններու համայնապատկերի նկարագրականը, անցեալի ապրուած օրերու, յուշերու հատընտիրները, անփոփոխ եւ անփոխարինելի կը մնան մեր յիշողութեան եւ երթագիտակցութեան մէջ: Արդ, ժամանակն է, որ օրերու սահանքին հետ մոռացութեան խրամատը նեղցնենք, կամուրջ մը նետենք վերաշէշտաւորելու նպատակով կամ սեղմ բառերով այդ բոլոր յուշագրութիւնները, յուշապատումները ամրագրենք՝ ոչ միայն իբրեւ սեփականութիւններ, այլեւ իբրեւ ազգապատկան ժառանգութիւններ, կառոյցներ, կալուածներ: Ամրագրած, հաստատագրած պէտք է ըլլայինք հայկական հետքերու ամբողջական այդ շրջապատկերը: Լրջօրէն պէտք է վկայակոչենք, այս մանր հայկական ածուն՝ Եագուպիէ թէ՛ այլուր, ամրագրենք անոր կենսապատումը եւ իրաւատէրի պահանջատիրութեամբ վերահաստատենք, այն գիտակցութեամբ, որ այդ բոլորը դրոշմուած են մեր ազգային հաւաքական յիշողութեան մէջ:

Հայկական բոլոր կալուածներու, հետքերու փճացումը, քանդումը նոյնիսկ կերպարանափոխումը եւ առնչակից նորագոյն ժամանակներու պատմական իրադարձութիւններու եւ երեւոյթներու ծալքերը, մեզ կը մղեն դէպի անցեալ թիպարելու, վերարտադրելու հաւաքական մեր ինքնութեան ոլորտներու մանրապատումները, ստուերներէն դուրս բերելու յանձնառութեամբ: Ստուգապէս իմանալով՝ ինչ որ չի գրուի մոռացութեան գիրկը կը նետուի:

(Շար. 3)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայ Աւետարանական համայնքապատկան նախակրթական եւ երկրորդական վարժարանները 2023-2024 ուսումնական տարեշրջանին համար կարիքը ունին.

- Երկու եւ աւելի տարիներու վարչական հմտութիւն ունեցող տնօրէնի եւ տեսուչի,
- Հմուտ եւ համալսարանական վկայագիր ունեցող ուսուցիչներու,
- Տնտես հայրիկի եւ մայրիկի:

Փափաքողները կրնան դիմել Կրթական Խորհուրդի գործադարութեան գրասենեակ:

Պրիմալետ

ԿՈՐՈՒՍՆԵՐ




Մարուշ Երամյան

Մի՞շտ այսպես եղած է, թե՞ միայն վերջերս է,- վերջին մեկ դարուն,- որ կորուստները հասեր են իրենց ծայրագույնին, կամ գենի-թին:

Պահ մը մտածեցե՛ք թե մենք՝ հայերս, 20-րդ դարուն ինչպիսի՛ կորուստներ ունեցանք, սկսելով 1894-1896-ի ջարդերեն, Եղեռնեն, սովետական բռնապետությունեն, հասնելու համար համաշխարհային երկու պատերազմներուն, ապրելով Բերիայի շրջանը, ներգաղթը իր ահաւոր հետեւանքներով, լիբանանեան պատերազմը, Կիպրոսը, Իրանը, Հայաստանի երկրաշարժը, Արցախը, Սուրիան, դարձեալ Լիբանանը, դարձեալ Արցախը...

Ասիկա՝ միայն հայերուն պարագային. եթէ դիտենք աշխարհը գուտ մարդկային առումով, պետք է նկատի առնենք նաեւ բնութեան աղետները՝ երկրաշարժ, ցունամի, հրդեհներ, ողողումներ եւ այլն:



Արդեօ՞ք հաղորդակցութեան նոր միջոցներն ու անոնց արագութիւնն են, որոնց միջոցով մեզի կը հասնին լուրերը աշխարհի չորս ծագերէն եւ բազմաթիւ անկիւններէն,- ուր մի՞շտ հայեր կան,- որոնք մեզի կը զգացնեն մեր անհատական թէ հաւաքական կորուստները եւ խոշորացոյցի տակ կ'առնեն զանոնք:

Անցեալ դարերուն եւս եղած են նման մարդկային թէ բնութեան աղետներ, որոնց ամենէն ահաւորը, կը կարծեմ, հարիւր տարուան երկու պատերազմներն են՝ Անգլիոյ եւ Ֆրանսայի միջեւ, երկուքն ալ միջնադարուն, առաջինը՝ 1337-1360-ին, երկրորդը՝ 1415-1453-ի տարիներուն: Պատկերացուցէք թէ քակի՛ սերունդ ծնած, ապրած եւ մահացած է այս «հարիւր» տարիներուն ընթացքին. այդ սերունդներուն համար կեանքը պատերազմ էր, ուրիշ ոչինչ:

Բայց այդ երկու անգամ «հարիւր» տարիներուն, այլ երկիրներ, ինչպէս՝ Ամերիկան, Ճափոնը, կամ Ափրիկէի երկիրները, ապրեր են իրենց խաղաղ, թեւէ դժուար առօրեան,- առօրեան մի՞շտ դժուար է իր ժամանակին համեմատ եղած հարցերով,- ապրեր են իրենց մանր պատերազմները, կռիւներու մէջ յաղթեր են կամ յաղթուեր...

Այսօր սակայն ուր որ բան մը պատահի,- նուազագոյն դէպքը,- արդէն շատ արագ կ'իմանանք. եւ եթէ քիչ մը խիղճ ունիք եւ քիչ մը զգայուն եւք, մեր նայուածքը կեանքին հանդէպ, ուզենք թէ ոչ, կը փոխուի:

Այս կորուստներուն ամենէն աննշանը (աննշան՝ տիեզերական առումով) մեր սիրելիներուն կորուստն է, իսկ ամենէն հզօրը՝ սեւ խոռոչներն են, որոնց մասին առաջին անգամ խօսուած է յարաբերական ուսողութեան մէջ (mathematics of relativity). գիտ մը, որուն առջեւ Այնշթայն ինք վարաներ է՝ կրնա՞յ ասիկա ճիշդ ըլլալ:

«Այնշթայն կը պայքարէր պատկերացնելու համար, թէ բնութիւնը կրնայ նման սպառնալիք յառաջացնել, եւ թէ տիեզերական ժամանակը կրնայ հասնիլ նման հրէշային ծայրայեղութեան», որովհետեւ այս խոռոչները իրենց մէջ կրնան ներքաշել եւ անհետացնել ամեն բան, ԱՄԷՆ բան որ մարդկութիւնը ստեղծեր է դարերու եւ դարերու ընթացքին:

Նոյնիսկ լոյսը չի կրնար խուսափիլ սեւ խոռոչներուն սպառնալիքէն:

Հետաքրքրական է այստեղ այն իրողութիւնը, որ սեւ խոռոչներուն նման հսկայ գիտ մը նախ գիտութեան, մաթեմատիկայի տարածքին մէջ տեղի կ'ունենայ, ապա կը հաստատուի բնութեան մէջ... Ուրեմն, որոշ չափով մարդկային ուղեղը, մարդուն տրամաբանելու կարողութիւնը կրնան հասնիլ բնութեանական իրողութիւններու, նախքան անոնց հաստատումը փաստերով, որոնք շատ անելի ժամանակ կը խլեն, ինչպէս սեւ խոռոչները, իրենց տեսական գիտէն դար մը ետք

հաստատուած...

Այս բոլորէն ետք կը մնան կորուստները եւ անոնց հետ համակերպելու, ապրելու մարդկային պարտադրանքը:

Կը յիշե՞ք Արշակ Զօպանեանի «Ես Ի՞նչ Ընեմ Հոգիով» պատմուածքը. երկու եղբայրներ Կիրակի յետմիջօրէի մը տունն են, փոքրը կը խաղայ, մեծը կը կարդայ: Փողոցէն յուղարկաւորութեան թափօր մը կ'անցնի տրտում երգերով եւ խունկի հոտով: Փոքր եղբոր համար ասիկա նորութիւն մըն է. կը սկսի հարցումներ ուղղել մեծ եղբորը, բայց չգոհանալով անոր պատասխաններէն, կը դիմէ մօրը, որ Նոյնանման պատասխաններ կու տայ: Եւ փոքրիկը յանկարծ կը սկսի բարձրաձայն լալ, հասած ըլլալով դառն իրականութեան:

«Մի՛նակ հոգի՞ս պիտի երթայ անդին... Ըսել է ա՛յ մայրիկը պիտի չտեսնեմ, ա՛յ հայրիկիս ձեռքը պիտի չբռնեմ, ա՛յ պիտի չքալեմ, ա՛յ կերակուր պիտի չուտեմ... Է՛, Ի՞նչ ընեմ, հոգիով Ի՞նչ ընեմ ես...»:

Մեզմէ իւրաքանչիւրին մէջ նման ողբ կը սկսի ինքզինք զգացնել այն օրէն, երբ կը զգանք կորուստը սիրելիի մը: Որքան մեծնանք, որքան հասունութիւն ապրինք, այդ ողբը կը վերածուի տիեզերքին, բայց մանաւանդ կեանքին առջեւ դրուած էական հարցադրումներու (existential perplexities, գոյացական տարակուսանք):

Բայց ինչպէս որ սեւ խոռոչներէն կարգ մը մասնիկներ կրնան ճողոպրիլ եւ դուրս գալ, ճիշդ այդպէս ալ մեր սիրելիներուն կորուստի ցաւը կրնանք ամոքել յուշերով եւ երեւակայութեամբ, որոնք մեր մէջ կ'ապրին, եւ որոնց միջոցով կրնանք գիրենք մեր առօրեային մէջ բերել:

Բայց եթէ ճիշդ է այն վարկածը, որ կ'ըսէ թէ մեր մէջ աստղափոշիներու հիւլէներ կան, ուրեմն մեզի համար, ենթագիտակցօրէն, ծանօթ է տիեզերական վիճակը, ուր կորուստները անխուսափելի են, հակառակ անոր, որ կ'ըսեն՝ ոչինչէն բան չի ծնիր եւ ոչինչ կը կորսուի, պարզապէս ձեւ եւ տեսակ կը փոխէ: Նոյնիսկ Բանը սկիզբէն գոյութիւն ունէր, ինչպէս կը կարդանք Աստուածաշունչին մէջ:

Յստակ է, որ մարդկային գիտակցութիւնը յաճախ կը մոլորի գիրար հակասող իր մտածումներուն մէջ: Բայց Ի՞նչ ալ որ ըլլայ, եթէ կորուստները անխուսափելի են, կը մնայ անոնց հետ համակերպիլ, անոնց հետ ապրելու ձեւ գտնել:

Եւ Ի՞նչ անելի գեղեցիկ ձեւ համակերպումի, քան արուեստներն ու գրականութիւնը... որոնք կը մնան մարդկային հոգիին բոլոր դարերու նուաճումը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Հանգուցեալ ԳԵՈՐԳ ԳԱԼԼԷՇԵԱՆԻ



Հանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 27 Օգոստոս 2023-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ - Հալեպ:
Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցւոյ ներքնասրահը:

«ԳԱՆՁԱՍԱՐ» ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Խմբագիր՝ Զարմիկ Զիւլբօշեան-Պողիկեան
Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
Վեհան Պարսումեան
Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պօղոսեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլբօշեան
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածները հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակով եւ կայքէջով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:

Եագուպիէ. Ապրուած Օրերու Յուշեր - 3- Ազգապարկան Կարուածներու Ներքերով



Փրոֆ. Արամ Սաջյէ

Սուրիահայութիւնը եւ մանաւանդ հալէպահայութիւնը անսխալաբար սելի պատերազմի դառնագոյն հետեւանքները կրեցին: Արտակարգ պատերազմի տագնապեցնող ահն ու սարսափը, աղէտալի իրավիճակը անցնող ամենէն բռնկուն (2012 - 2016) եւ դժոխային տարիները, իսլամ ծայրայեղականներու պարտադրեալ եւ սպառնացող չարիքները, տեղահանութեան եւ գոյութեան վտանգները, հարկադրեալ ընկերային սահմանափակումները կը թուէին մասամբ մը մեղմացած եւ հանդարտած ըլլալ⁽¹⁾: Անսխալանձեղի մղձաւանջէն եւ քառսէն տեք, Իտիլիայի նահանգի մէջ գտնուող Եագուպիէի եւ Եագուպիէցիներուն համար ալ, օրերու ընթացքին, խաբուսիկ լաւատեսութեան լուսամուտ մը սկսաւ երեւալ:

Այդ մէկը անդրադարձ էր. երբ 2016 թուականի Օգոստոսին, թրքական քաղաքականութիւնը փոխուեցաւ՝ Թուրքիան ծայրայեղական հազարաւոր գրոհայիններ հեռացուց Զալէպի արեւմուտքի շրջաններէն եւ Զալէպը կըրցաւ որոշ չափով ազատ շունչ մը քաշել, յայտարարելով իր ազատագրումը:

Այս ընթացքով յուսախաբութիւններու ճօճանակի երերումը կը կարծուէր անարտին հասած ըլլալ, ուստի դէպի գիւղ վերադառնալու իրատես յոյս մը աճած էր բաղդատած Սուրիոյ տագնապի վատթարագոյն տարիներուն հետ: Սակայն Իտիլիայի անկայուն, անապահով եւ մանաւանդ անվճար տահելի, անհեռանկար եւ ցաւոտ իրավիճակը շարունակուեցաւ, իրաւատէր պետական ինքնիշխանութեան ամբողջական բացակայութեամբ. սուրիական պետական ներկայութիւնը հեռու մնաց այդ շրջանէն: Դարձեալ հոն տեղի ունեցան՝ անմարդկային բռնաբարումներ, պղծումներ, քստմնելի սպանութիւններ, ոճիրներ. պարզապէս օրինակ մը յիշելով արձանագրեցք հայ առաքելական եկեղեցւոյ գաւակ, ճըսըր Շուրի արաբ երկրորդական դպրոցներու երկարամեայ վաստակաշատ ուսուցչուհի՝ Սուզան Տէր Գարգուրի անողոք բռնաբարումն ու գազանակերպ սպանութիւնը, որոնք տեղի ունեցան Չորեքշաբթի, 10 Յուլիս 2019-ին, այդ շրջանի բարբարոս մոլուցքով սնանած իսլամ ծայրայեղականներու ձեռամբ: Ան կառչած մնացած էր ծնընդավայրին՝ Եագուպիէի, չէր հրաժարած անկէ, որոշած էր Նոյնիսկ առանձին մնալ եւ չհեռանալ իր գիւղէն, կալուածներէն եւ արտերէն: Զստմնելորդ դարուն մէջ, քրիստոնէայ հայ կնոջ մը հանդէպ այս անմարդկային ոճիրը ոչ միայն ուժգնօրէն ոտնահարեց, ցնցեց հայ, այլեւ բոլոր քրիստոնէայ համայնքներու մարդկային արժանապատուութիւնը:

Արաբ մարդկային իրաւունքներու դիտորդներ, դիտորդական կեդրոններ, արձագանգած, ցանկագրած եւ մանրամասնութեամբ նկարագրած են իսլամական ծայրայեղականներու կողմէ այդ շրջանի գիւղերու եւ անաններու մէջ քրիստոնէայ համայնքի անդամներու, հոգեւորականներու, եկեղեցիներու եւ կալուածներու նկատմամբ իրագործուած թալանը, կալուածներու եւ բնակարաններու կողոպուտը, առեւանգումները եւ ոճիրները:

Նոր երկուորները իրենց իշխանաւորներու հրամաններով դժբախտաբար քանդած եւ անհետ կորուստի մատնած են Եագուպիէի հայ առաքելական Սուրբ Զոհիսիմէ եկեղեցւոյ կողքին գերեզմանատան մէջ կանգնած դարաւոր Ս. Թեոթորոս մատուռը, հողին հաւասարեցուցած են հայոց գերեզմանատունը ու հոն գտնուող տապանաքարերն ու գերեզմանները: Սուրբ Զոհիսիմէ եկեղեցւոյ կից հայոց գերեզմանատան տարածքը վերածուած է հանրային պարտեզի: Ճիշդ է, որ Ս. Զոհիսիմէ եկեղեցւոյ քարեղէն կառուցը մնացած է, բայց վար առնուած են եկեղեցւոյ միակ գմբեթի եւ գանգակատան երկաթեայ խաչերը, նմանապէս չկան արտաքին ցանկապատերուն վրայ երեւցող խաչերը: Նոյն վախճանին արժանացած են Եագուպիէի ազգապատկան ուխտավայր՝ Սուրբ Աննա եկեղեցւոյ խաչը, գանգակատան խաչը, եկեղեցւոյ կողքի գերեզմանատան տապանաքարերուն ու գերեզմաններուն վրայ քանդակուած խաչերը: Երկու եկեղեցիներու պարագային ալ մկրտարաններէն վերցուած են մարմարեայ խաչերը: Անյայտացած, կազմափոխուած են թէ՛ հայկական եւ թէ՛ քրիստոնէական պատմական հետքերը:

Թալանուած ու կողոպտուած է Եագուպիէի ազգապատկան Բերիոյ Զայոց Թեմի կեդրոնի շէնքը: Նոյն կողոպուտին ենթարկուած է Սուրբ Աննա եկեղեցւոյ կողքին ուխտաւորներու ազգապատկան հանգստավայր պանդոկը, որուն շինարարութիւնը Նոր անարտած էր տագնապէն առաջ: Արմատախիլ եղած են դէպի Սուրբ Աննա եկեղեցի բարձունքին վրայ գտնուող եւ եկեղեցւոյ պատկանող գեղատեսիլ կաղնիները, նոյն ճակատագրին ենթարկուած են նաեւ եկեղեցւոյ պատկանող յարակից ձիթենիներու պարտեզները: Ինչպէ՛ս չյիշել Սուրբ Զոհիսիմէ եկեղեցւոյ շրջափակին դիմաց գտնուող, գիւղին մէջ քահանային յատկացուած ազգապատկան բնակարանը, որ ամբողջութեամբ թալանուած եւ շահարկումի դրուած է: Գիւղին մէջ բոլոր անմարդաբնակ տուները ենթարկուած են կողոպուտի, յափշտակուած եւ թալանուած է ամէն ինչ որ կարելի է քակել, վերցնել ու տանիլ՝ իրեր, գործիքներ, մթերք եւ այլն: Իսկ լաւագոյն պարագային, այդ բնակարանները օտար երկուորներու կողմէ, տարիներէ ի վեր օգտագործումի են շահարկումի մէջ են:

Օտար երկուորներու իշխանութեան պայմաններուն բերումով, այսօր

սպասումի մթնոլորտ մը կը տիրէ՝ թէ թրքամետ օտարականները, այդ շրջաններու վերահսկողները ինչպիսի՞ իրաւաբանական վերաբերմունք կամ արտօնութիւններ պիտի ուզեն «շնորհել» եւ կամ պարտադրել բացակայ քրիստոնէայ տեղացիներու կալուածատէրերուն, կամ անոնց ներկայացուցիչներուն, որոնք գիւղ կը մնան: Նոյնպէս անշարժ գոյքերու, գիւղատնտեսական պտղաստաններու, կալուածներու թէ արտերու սեփականատէրերուն տիրակալութեան նկատմամբ, կամ այդ կալուածներու առուծախը ո՞ր պետութեան առնչուած է կամ հովանին պիտի վայելէ, ինչպիսի՞ դրամանիշով, ի՞նչ էրաշխիքով, ապահովագրութեամբ կրնան ըլլալ համաձայնութիւնները: Ի՞նչ է այդ երկուորներուն հետ կնքուելիք համաձայնութեան հաւաստիութիւնը, նոյնիսկ համաձայնագրերու վաւերականութիւնը, երաշխաւորութիւնը: Ինչպիսի՞ շահագործման պայմաններով, լիազօրութիւններով պիտի ըլլան այդ գործարքները: Կալուածներու բազմաբնոյթ, անվստահելի, անվաւեր ու անպատասխան հարցեր: Այդ բոլոր կալուածներու, ստացուածքներու ճակատագիրը անհեռանկար եւ տարակուսելի կը մնայ կալուածներու սեփականատէրերուն համար:

Անկանխատեսելի իրադարձութիւն մըն էր այն, որ տեղի ունեցաւ Կիրակի, 28 Օգոստոս 2022-ին, երբ Եագուպիէի Սուրբ Աննայի տօնին առիթով Սուրբ Ալճուլանի ծածկանունով այդ շրջանի ահաբեկչական խմբաւորումներու գլխաւոր իշխանաւորը սուրբին տօնէն շաբաթ մը առաջ հրահանգեց ահաբեկչներուն եւ անոնց համակիրներուն, որոնք իրաւտէրի համարձակութեամբ են ինքնավստահութեամբ հոն հաստատուած են, որ չխանգարեն այդ տօնին հետ կապուած աղօթքը: Իշխանաւորը համաձայնած էր, որ հոն մնացող Եագուպիէցի տեղացիները Սուրբ Աննա եկեղեցւոյ մէջ աղօթք մատուցանեն, ուստի գիւղ մնացողներու օգնութեամբ եկեղեցին մաքրուած եւ պատրաստուած էր Կիրակի օրուան աղօթքին համար:

Այս գիշումին եւ երկխօսութեան մթնոլորտը եղած է յորդանանցի լատին քահանային՝ Լուայ Պշարաթի միջոցաւ, որ ժամանակէ մը ի վեր կ'ապրի գիւղին մէջ եւ լեզու գտած է ու կը համագործակցի այդ իսլամ օտար, նոր երկուորներուն հրամանատարներուն հետ, որոնք ահաբեկիչներուն յաջորդներն են եւ անոնց «արժանաւոր» ժառանգորդները:

Սուրբ Աննայի տօնին առիթով Կիրակի, 28 Օգոստոս 2022-ին եւ նոյն եկեղեցւոյ խորանէն արաբերէնով միասնաբար աղօթք բարձրացուցած են յորդանանցի հոգեւորական՝ Լ. Պշարաթը եւ Գընայի լատիններու հոգեւորական Զաննա Ճալլուֆը: Աղօթքին մասնակցած են Եագուպիէ եւ Գընայէ մնացող տեղացիներ, աղօթքէն տեք տեղացիներու պատրաստած քաղցրեղէնի հիւրասիրութեամբ ներկաները յիշատակած են Սուրբին տօնը⁽²⁾:



Պարտք է յիշել, որ Զալէպի Լատինաց եկեղեցւոյ առաջնորդութեան պատկանող հոգեւորականը՝ Զաննա Ճալլուֆ ծնած է Գընայէ գիւղը 1952-ին, գնահատանքի գիր ստացած է Ֆրանչիսկոս Պապի կողմէ 17 Յունուար 2022-ին, որպէս՝ իր հօտի բարօրութեան ծառայող Նուիրեալ, օրինակելի հոգեւորական:

Տասներկու տարիներէ ի վեր պատերազմի պատճառած ապահովական, ընկերային, առողջապահական եւ կենսուժի տագնապները, պատժամիջոցներու բերումով գործադրուած երկրի շրջափակման «Կայսեր» օրէնքը, կենցաղային ամենէն տարրական պէտքերու ապահովման դժուարութիւնը երեւի բաւարար չէին բազմատանջ սուրիացի քաղաքացիներուն համար, այդ բոլորին վրայ գումարուեցան 6 Փետրուար 2023-ին սկսած երկրաշարժը եւ տարբեր ուժգնութեամբ յետցնցումները, որոնք շարունակուեցան Զալէպի եւ մանաւանդ Սուրիոյ հիւսիսային շրջաններուն մէջ: Բնութեան կողմէ վշտաբեր տագնապները՝ երկրաշարժն ու յետցնցումները շարունակեցին իրենց մահաբեր ակերները: Յետցնցումներու ճակատագրական կործանիչ հետեւանքներէն անմասն չմնացին նաեւ Եագուպիէն եւ յա-

Շար.՝ էջ 6 ➤

1-«Գանձասար» շաբաթաթերթ Օգոստոս Բ. (2022), էջ 6 եւ 8. <http://www.kantsasar.com/news/37625-2/>
2- «Գանձասար» շաբաթաթերթ Օգոստոս Բ. (2022), էջ 8. <http://www.kantsasar.com/news/37625-2/>


ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ԿԱԽԱՐԴԱՆՔԸ

(Յեղիակ՝ Մարգարետ Մարկոսեան)

Արմենակ Եղիայեան

Այս հատորը կը սկսեր հեղինակին առաջին տպաւորութեամբ, որ ան կը կրէր Քալիֆորնիա հասնելու վաղորդայնին...

Բայց ահա ժամանակը ցոյց կու տայ, որ միշտ բացառութիւններ պիտի ըլլան, եւ ինք այս վերջիններէն է. այս կը հաստատեն համեստ ծնընդավայրին անջնջելի կարօտը...



«Մեր թաղին՝ տարածքը մեծ չէր. անոր կեանք տուող թաղեցիներուն՝ բոլորն ալ Եղեռնէն վերապրած, սրտերուն ընդարձակութեան չէր հասներ...»

Իսկ քայլ մը անդին՝

«Թաղին հարաւային սահմանը նարնջեղիներն էին, իսկ հիւսիս-արեւելեան կողմէն՝ Լափաշներու թաղը: Անոր կողքին բանջարեղէններու դաշտը, մասնաւորաբար ու մանաւանդ այն հատուածը, ուր կը հասունային ելակները՝ տարածելով իրենց շամանդաղուող բոյրը համեստ պարտեզներէ մինչեւ մեր թաղը, դաշտը վերածելով պտուղներու... վաւերական երանգապնակի»:

Բայց կայ անելի փորձանաւորը՝ տան բոլորովին կից.

«Մեր տան ճիշդ քովը տիկին Շեյխայի տունն էր ու պարտեզը: Մտքիս մէջ մինչեւ հիմա կը յամենան պարտեզին մաստարիկի ծառերը: Զմրան՝ Նոյեմբեր, Դեկտեմբերին հասուն պտուղներուն վրայ անձրեւի կայլակները շոյալ պսպղումներով կը խայտային եւ արեւուն ճառագայթները

կը տարբադարձին անձրեւի կայթիւնները անհամար պրիսմակներու վերածուած: Որքա՛ն պիտի ուզէինք համտեսել այդ պտուղները, որպէսզի մեր աչքերուն տեսածը մեր մանուկի քիմքերը հաստատէին: Բայց ափսոս, պարտեզը պաշտպանող փշաթելերը կը սանձէին մեր անորձակները, իսկ մեր ծնողները խստիւ պատուիրէր էին՝ «չըլլայ քի լսեցը»:

Բայց նաեւ ու մանաւանդ շարականները մօտակայ եկեղեցիին, ուր ինք մանուկ հասակէն սկսած կը ծառայէր իբրեւ դպիր.

«Այդ երգերը ծննդեան գիշերներու «խորհուրդ մեծ»-ն էր ու շատկուան գիշերներու «Քրիստոս յարեալ»-ը: Գիտէի այդ երգերը, մենք եւս այդ պահերուն կ'երգէինք տունէ-տուն՝ քանի մը գաթայ կամ քանի մը դահեկան ստանալու համար՝ եւ մեկ-երկու ժամ ետք կազմու պատրաստ, առաւօտ կանուխ, երբ ժամը կը մօտենար չորսին, կ'աճապարէինք դէպի սուրբ Աստուածածին եկեղեցին՝ տօնական օրերու առաւօտեան ժամերգութիւնը սկսելու»:

Լոյս, արարիչ լուսոյ, առաջին լոյս, Ծագեա՛լ ի հոգիս մեր գլոյս քո իմանալի...

Ու դէռ ասոնց հետ ու ասոնց չափ ալ... «Դըլէ եաման»-ն ու «Որսկան աղբեր»-ը...

Կարելի է միայն գարմանալ, թէ այս բոլորին մտապատկերը ինչպէ՞ս կրցած է այնքան վառ, կենդանի ու անաղարտ կրել այնքան տարի՝ կենսաբանական գիտութիւններու եւ քիմիային կենսաբանութեան տարրալուծարաններուն մէջ եւ Քալիֆորնիոյ այլասերիչ քառուղիներուն վրայ:

Վերջին, բայց ոչ-նսեմագոյնը այս գրքին ու անոր հեղինակին արժանիքներէն:

Այն միջավայրին մէջ, ուր հասակ առաւ Մարգարետ, - ու տողերս գրողը, - չէին պակսեր հայախօս ընտանիքները, սակայն այն հայերէնն ու հայեցի մթնոլորտը, որ կը տիրէր Մարկոսեաններու տան մէջ, ունէր ուրիշ որակ ու տարողութիւն. Մարգարետ այդ որակն ու տարողութիւնը իւրացուցած ալ բաժնուեցաւ բոլորէս եւ վաղ երիտասարդական տարիներուն մեկնեցաւ Միացեալ Նահանգներ՝ աշխարհի ամենայնառաջադէմ ոստանին մէջ անելի տիրելու խորհուրդներուն այն գիտութեան, որ մագնիսի մը պէս էր քաշէր գիրք, ու յաջողեցաւ այնտեղ անյազուրկ ըմպել անոր յորդառատ դաշխուրանէն: Իր յաճախակի այցելութիւնները՝ ծննդավայրը, հարազատներուն եւ բարեկամներուն, դիրաւ նկատելի կը դարձնէին այն շեշտուած հայեցիութիւնն ու լեզուական գերակայութիւնը, որ ան կը վայելէր յարաբերաբար շրջապատին: Ու չէինք գարմանար. ան միշտ փայլած էր իր գերակայութեամբ: Ինչ որ սակայն ապշեցուցիչ էր՝ հայերէնի իմացութեան այն յաւելեալ որակն էր, որ ձեռք բերած էր բացակայութեան տարիներուն՝ առիցնող որակը բառերուն, շարադրութեան ու ոճին: Գոհանալը քանի մը նմուշով. ընթերցողը ամեն քայլին պիտի վայելէ գանոնը:

Այստեղ ուշադրութիւնը կը գրաւեն՝

-Առաջին նուագ այն բառերը, որոնց... առաջին անգամս է կը հանդիպիս կեանքիդ մէջ, ինչպէս՝ անհերձելի, երկպարոյրային, կողահերձ, հաստատուններ (constants), հաւատաւոր թերափ, հոգեյատակ, հրազինել, մոյնք, շաքլել (droning), ոչնչատեսիլ, սաղապամիտ, ստերիլ-անստերիլ, վրնջական, փաղաղուած, փերեւտել...

-Ապա այնպիսիները, որ տարտամօրէն կը ճանչնաս, սակայն չես համարձակիր կիրարկել, ինչպէս՝ անգայտ, գոյութեանական խկութիւն, խտորը համեմատիլ, մախանք, շամանդաղ, շո-

ղումել, վարշամակել, տեսակարար կշիռ...

-Եւ վերջապէս ոճեր ու բառակապակցութիւններ, ինչպէս՝

առհաւական խռովք գաղափարական հերձուճի անծօրը խտրացնող փառասիրութիւններ կարողական ստորագելիներ, միամտութիւններ փառասիրել յուզումնախառն զգայնութիւններու ալեբախումը յուշերու խարակներուն դէմ պալար կապած մոցի ու գաղափարի ստերցութիւն

անամէջ ու անբարձելի տարակարծութիւններ իր տեսակետները համոզիչ դարձնելու համար չի վարանիր Աստուածաշունչէն, Նարեկացիէն, մինչեւ մեր շարականներէն գրաբար այլազան մեջբերումներ կատարելու.

Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն են հաւատքն ձեր, ընդունայն են քարոզութիւնք մեր:

Կարելի չէ հարց չտալ՝ «Աղէկ, հապա այս գրաբարը ե՞րբ եւ որմէ՞սորվեցաւ»:

Չենք կրնար այս հատուածը փակել՝ առանց անդադառնալու Մարգարետի գրական ծաւալուն վերլուծումներուն՝ նուիրուած Չարենցի, Թեքեանի, Չարեհ Մելքոնեանի, Ժագ Յակոբեանի, Ստեփան Ալաջաջեանի եւ քանի մը ուրիշներու, վերլուծումներ, որոնք շատ անելի անդին կ'երթան հայկական երկրորդական վարժարանի մը տուածէն՝ մեր բոլոր յարգանքներով իր յաճախած դրպարոցին հանդէպ: Առ այս՝ չի վարանիր իրապարակել իր յախունն դաստողութիւնները. «Ժագ Յակոբեան կ'ըլլայ մեր մշակոյթի անդաստանի տիրական դէմքերէն մին՝ քովն ի վեր Մեծարենցի, Տերեանի ու մանաւանդ Վահան Թեքեանի»: Սա իր կարգին կը նշանակէ անելի քան սիրողական ուրիշ մարդ մը, որ առիթ գտած է զարգացնելու նմանապէս ակադեմական կրթութեան գուգահեռ, ա՛լ չեմ խօսիր օտար գրականութեանց, - գրականութեանց կ'ըսեմ, այո՛ւ, - մէջ ունեցած ապշեցուցիչ ծանօթութիւններուն մասին:

Այս պարագային եւս գոհանալը հակիրճ նախաճաշակով մը կամ յիշատակումով մը միայն, իսկ ընթերցողը աշխատութեան երկայնքին լիաբուն պիտի գտնէ այսպիսիները մեծ ձեռնհասութեամբ կիրարկուած՝ ի վայելումս քմաց ու մտաց իւրոց:

(Շար. 2 եւ վերջ)

3- Պուրճ Համմուտի հիւսիս-արեւելեան ծայրը՝ բոլորովին հայախօս Նոր Թոմարգան:

4- Յեղիակը համեստութեամբ կը խուսափի յիշելէ, որ ան՝ ոմանց համար «պարոն Սահակը», իսկ ուրիշներու համար՝ «Սահակ աղան» հայրն է՝ ըստ ամենայնի պատկառելի անձնաւորութիւն մը, որ հանրօրէն յարգուած ու սիրուած էր բոլորէն:

5- Այդ գիշեր պտուղները միայն իրենք չէին. կը պտտէին ուրիշ խումբեր ալ, որոնք կը գարնէին իր պապեանական տան դուռը եւս. այստեղ՝ կիսաբաց դռնէն ձեռք մը չափ մը չամիչ, գաթայ մը կամ մետաղադրամ մը երկարելով չէր գոհանար. դուռը լայն կը բացուէր երգողներուն առջեւ, անոնք սիրալիք ներս կը հրաւիրուէին, ըստ պատշաճի կը հիւրասիրուէին այլազան բարիքներով, աւարտին՝ պարոն Սահակը կամ Սահակ աղան մտերմաբար կը հարցնէր. «Նայիմ որքա՛ն հաւաքեր էք»... Եւ տղաքը իրենց հաւաքած գումարը կրկնապատկած եւ մախաղները լեփլեցուն դուրս կու գային այդ տունէն:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- 

Խոյ
Բաւական դժուար հանգրուանները կ'անցնիք: Յաւելեալ ճիգերով պիտի յաղթահարեք զանոնք: Լաւատես եղէ՛ք:
- 

Ցուլ
Լրջութեամբ մօտեցէ՛ք ձեզի վրտահուած առաքելութեան: Ձանք մի՛ խնայեք յառաջանալու դէպի նպատակներու իրագործում:
- 

Երկուորեակ
Լաւատես ու բարի էք: Այդ պատճառով ալ բարձր դիրքերու պիտի հասնիք: Զիչ մը համբերեցէ՛ք:
- 

Խեցգետին
Մեծ անկունադարձ մը պիտի ունենաք ձեր կեանքին մէջ: Բարեկամներուն աջակցութիւնը պիտի վայելէ:
- 

Առիւծ
Ձեր վեհանձն նկարագրին շնորհիւ յարգանքի պիտի արժանանաք: Վեճերէն խուսափեցէ՛ք:
- 

Կոյս
Մարդիկ պիտի նկատեն ձեր տառապանքը եւ օգնութեան ձեռք պիտի երկարեն ձեզի: Մի՛ յուսահատիք:
- 

Կշիռք
Աստուծոյ ապաւինելով պիտի բարգաւաճիք: Ձեր գովելի կերպարը մարդոց նախանձը կը շարժէ: Ինքնավստահութեամբ յաջառացէ՛ք:
- 


Կարիճ
Մեծ եկամուտ մը պիտի ունենաք, որ պիտի խանդավառէ ձեզ: Գործի տրամադրութիւնը մը պիտի ստանաք: Մի՛ երկմտիք:
- 

Աղեղնաւոր
Տիպար ու օրինակելի էք: Ձեր խելամտութիւնը մեծ յաջողութիւններու պիտի առաջնորդէ ձեզ: Արժանի էք ամենայն բարիքի:
- 

Այծեղջիւր
Մարդիկ չարաչար կ'ուզեն օգտագործել ձեր բարութիւնը: Արդարօրէն մօտեցէ՛ք բոլոր հարցերուն եւ ճշգրիտ որոշումներ գոյացուցէ՛ք:
- 

Ջրհոս
Մի՛ անտեսեք ձեզի վստահուած գործը: Անկեղծութեամբ մօտեցէ՛ք ձեր ընկերներուն եւ անպայմանօրէն պիտի գնահատուիք:
- 

Ձուկ
Չարաչար կ'աշխատիք եւ ոչ մէկ արդիւնքի կը հասնիք: Համբերատար եղէ՛ք, որովհետեւ ի վերջոյ պիտի պարգեւատրուիք:



Նուշիկ Սողոյեան-Աղաքելեան

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԻԱՆԴԱԿԱՆ ՀԱՐԻՍԱ

Հայկական խոհանոցը ազգային մշակոյթը բնութագրող կարեւորագոյն մասերէն մէկն է: Որոշ ճաշատեսակներ չեն փոխուած



եւ մինչեւ օրս սերունդէ-սերունդ կը փոխանցուին: Հայաստանի, թէ Սփիւռքի մէջ ամենասիրուած եւ աւանդական ճաշերէն է հարիսան, որ կը պատրաստուի ցորենով եւ միսով (ոչխարի, կովու կամ հաւու):
Հարիսան հայկական խոհանոցին անբաժանելի մասը դարձած է: Անոր պատմութիւնը աղբստուած է մեր կրօնքին:

Հայկական Հարիսային Պատմութիւնը
Հարիսա բառը «հարել» բառէն ծագում առած է: Ըստ Խրիմեան հայրիկին պատմած աւանդութեան, Գրիգոր Լուսաւորիչ Խոր Վիրապէն ելլելէն ետք, Վաղարշապատի մէջ 60 օր քարոզած է հեթանոսներուն, ապա փափաքած է աղքատները կերակրել: Եզներ ու ոչխարներ մորթելով միսը լեցուցած են կաթսաներու մէջ ու վրան ձաւար կամ կորկոտ աւելցուցած: Յետոյ Գրիգոր Լուսաւորիչի «Հարէ՛ք զսա» իրամանով մարդիկ ուժգնօրէն խառնած են կաթսային մէջ գտնուող միսն ու ձաւարը: Հոնկէ ալ այս կերակուրին անունը մնացած է հարիսա:

Ժամանակի ընթացքին հարիսայի պատրաստման եղանակը զարգացած է: Չայն աղով-պղպեղով համեմելէն ետք, վերջաւորութեան անոր վրայ աւելցուցած են նաեւ իւղը կամ կարագը:
Մուսալեռացիներուն համար հարիսան մեծ խորհուրդ մը ունի: Մուսա լեռան հերոսամարտի ընթացքին պաշարուած մուսալեռացիները ցորեն եւ այծի միս ունեցած են ու անոնցմով իրենց ճաշը պատրաստած: Հարիսան եղած է անոնց հիմնական ճաշը եւ կենսական նշանակութիւն ունեցած է իրենց համար:

Հարիսայի Նշանակութիւնը Հայկական Խոհանոցէն Ներս

Հարիսան սովորաբար կը մատուցուի կրօնական տօներուն եւ յատուկ առիթներու ընթացքին:
Հայեր զայն միասնութեան եւ համախմբման խորհրդանիշ համարած են: Դարերու ընթացքին զայն պատրաստած են մեր պապերը, պապերուն պապերը եւ այսպէս շարունակ:
Հարիսան նաեւ կը համարուէր զօրքի ճաշ: Հին ժամանակ անոր պատրաստութիւնը զոհամատուցման արարողութիւն կը համարուէր: Անիկա ամբողջ գիշերը կ'եփէին թոնիի մարմանդ կրակին վրայ, որպէսզի առաւօտեան զայն ժողովուրդին մատուցէին:
Ամանորեան հարիսան բոլորովին կը տարբերէ մնացեալ հարիսաներէն, որովհետեւ միսն ու ցորենը բնաւ չէին խառնէր, որպէսզի տարին հաշտ ու խաղաղ ընթանայ:
Բացի իր մշակութային նշանակութենէն, հարիսան նաեւ առողջութեան օգտակար է, որովհետեւ հարուստ է սպիտակուցներով եւ մանրաթելերով:
Հարիսան հայ ընտանիքներուն սերունդէ-սերունդ փոխանցուող սննդարար ու յագեցնող ճաշատեսակն է:

Հարիսայի Պատրաստութեան Կերպը

Ձաւարը կամ կորկոտը քակի մը ժամ թորջել պաղ ջուրով: Միսը կտրտել ու դնել կաթսային մէջ, անոր վրայ աւելցնել ձաւարն ու ջուրը (մինչեւ 4-5 սմ. ծածկէ կաթսային պարու-



նակութիւնը): Եռալէն ետք փրփուրը հեռացնել եւ մարմանդ կրակի վրայ շարունակ եփել:

Երբ զանգուածը թանձրանայ՝ փայտե դգալով անդադար խառնել, որ չայրի: Ընթացքին ոսկորները անջատել, աղ ցանել եւ վրան իւր սրսկելէ ետք մատուցել:

Բարի ախորժակ



Ռաֆֆի Սիկանյան

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՑ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸՆ

- Սուրիոյ պատերազմի տղոց հաւաքականը, շարունակելով իր ձախող խաղարկութիւնը, գրաւեց Փարիզի Ողոմպիական գտման մրցումներու աղիւսակին վերջին տեղը՝ արձանագրելով հինգ պարտութիւն եւ մէկ յաղթանակ: Սուրիոյ հաւաքականը պարտութեան մատնուեցաւ 3 շրջանէն 74-85, Պահրէյնէն 91-60, Իսպանիայէն 85-70 եւ Ինտոնէզիայէն 78-84 արդիւնքներով: Կազմը յաղթեց Սեուտական Արաբիոյ 73-71 արդիւնքով:



- Լաթաքիոյ մէջ տեղի ունեցած տարեկան 23-րդ մրցաշարի ակադեմիայի, թըշրին խումբը 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց 3 շրջանը եւ տիրացաւ ախոյեանութեան կոչումին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՊՐԱԶԻԼՑԻ ՆԵՅՄԱՐ ՄԻԱՅԱՒ ԱԼ-ՅԻԼԱԼ ԽՈՒՄԲԻՆ

Պրազիլի հաւաքականի 31-ամեայ յարձակող Նեյմար Ֆրանսայի ախոյեան Փարիզ Սան Ժերման խումբէն տեղափոխուեցաւ Սեուտական Արաբիոյ Ալ-Յիլալ խումբ: Ըստ փոխանցուած տեղեկութիւններուն, Նեյմար տարեկան պիտի ստանայ 300 միլիոն եւրօ, անոր պիտի տրամադրուի նաեւ հինգ ինքնաշարժ, հսկայ պալատ եւ անձնական օդանավ: Ալ-Յիլալ խումբը կազմին միացուց նաեւ Մարոքի հաւաքականի եւ Սպանիոյ Սիլվիոյա ակումբի դարպասապահ Եասին Պոնսն: Պոնս սեուտական ակումբին հետ ստորագրեց երեք տարուան պայմանագրութիւն՝ փոխան 21 միլիոն եւրոյի:



ԱՐՄԵՆ ԶԱԽԱՐԵԱՆ «ՌԵԱԼ ՍՈՒՆՏԱՏ»-Ի ԴՅԵ ԶԱՄԱԶԱՅՆԵՑԱՒ

Ռուսիոյ հաւաքականի կիսապաշտպան Արսեն Զախարեան Մոսկուայի «Տինամօ» խումբէն տեղափոխուեցաւ «Ռեալ Սոստատ»: Ըստ սպանական մամուլին, 20-ամեայ հայ մարզիկը ստորագրած է 6 տարուան պայմանագրութիւն: «Տինամօ»-ն Զախարեանի փոխադրութեամբ ստացաւ 12 միլիոն եւրօ: Ընթացիկ մրցաշրջանին Զախարեան Տինամօյի հետ մասնակցեցաւ 5 հանդիպումի եւ նշանակեց 2 կոլ, կատարելով նաեւ 1 կոլային փոխանցում: Զախարեան հանդէս պիտի գայ 12 թուակիր խաղաշապիկով: Աւելցնենք, որ «Ռեալ Սոստատ» նուաճած է Զեմփիընզ Լիկի խմբային մրցաշարի ուղեգիր:



ՍՊԱՆԻՈՑ ԿԱՆԱՆՑ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԶԱՄԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱԿՈՅԵԱՆ ԴԱՐՁԱՒ



Կանանց Սպանիոյ ֆութպոլի հաւաքականը նուաճեց աշխարհի ախոյեանի տիտղոսը՝ 1-0 արդիւնքով պարտութեան մատնելով Անգլիոյ հաւաքականը: Աւստրալիոյ Սիտի քաղաքին մէջ տեղի ունեցած եզրափակիչ հանդիպումին, սպանացիները առաւելութեան հասան շնորհիւ Ռեալ Մատրիտի պաշտպանողական մարզուհի Օլկա Կարմոնային:

Յիշենք, որ այս առաջին անգամն է որ Սպանիա կը տիրանայ աշխարհի ախոյեանութեան:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 452)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1					■							
2		■										
3				■			■				■	
4		■			■					■		
5				■					■			
6							■					
7	■		■							■		
8		■										
9						■						
10								■		■		
11			■									
12		■							■			

Յորհոնական

- 1- Արցախի հիւսիսը գտնուող լեռ: Սուրալով յարձակի:
- 2- Բոլորը միասին:
- 3- Հակառակ՝ հաստ գաւազան: Թունաւոր օձ: Յեղ մը:
- 4- Եւս: Հակառակ՝ տառի մը անունը: Հակառակ՝ 7070:
- 5- Գրաբար՝ օր: Փայտի վրայ մանր ճիւղ՝ շիւղ: Մայրական սնունդ:
- 6- Պայքարող: Համաշխարհային Ա. պատերազմի օրերուն կամաւորական Դ. խումբի հրամանատարը:
- 7- 7200:
- 8- Բաղաձայն տառեր: Տառի մը անունը:
- 9- Ռումբի տեսակ: Ծառը կանգուն պահող բաժինը:
- 10- Փութաջան: Անձնական դերանուն:
- 11- Եւս: Հակառակ՝ քաջ: Հակառակ՝ փայտե կազմած, որուն վրայ որթը կը յենու:
- 12- Անասուն որսալու գործիք: Ոչ հասուն:

Ուղղահայեաց

- 1- Ս. Յովակիմի եւ Ս. Աննայի դուստրը: Լաչակ:
- 2- Հակառակ՝ աղէկ: Հակառակ՝ աղէտի թել:
- 3- Սովորոյթ: Սիւսմանթոյի ծննդավայրը:
- 4- 7200: Յաւի ճիչ:
- 5- Կրկնուած ձայնաւորներ: Կոկորդ, կլափ:
- 6- Խառնակ ամբոխ, կազմուած ընկերութեան ստոր տարրերէն: Հակառակ՝ քաջ:
- 7- 670: Խռովարար:
- 8- Պնդագլուխ:
- 9- Տարուան եղանակներէն: Անկորիզ մանր եւ քաղցր խաղողի չամիչ:
- 10- Արդի: Հակառակ՝ ժամանում: Կրկնուած ձայնաւորներ: Տառի մը հարեանները:
- 11- Հակառակ՝ 7001: Հակառակ՝ ճամբայ: Հակառակ՝ բիծ:
- 12- Աւետիս Ահարոնեանի ստեղծագործութիւններէն: Հակառակ՝ գոյութիւն ունին:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 451)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ձ	ն	գ	ի	լ	վ	ա	կ	ա	ս		
2	տ	ա	ր	ք	ա	ք	ա	ն	ա	տ	է	
3	ա	է	ա	ա	ա	հ	ա	ա	ա	ր		
4	պ	ա	ն	ա	խ	ա	ք	ն	ի	կ		
5	ա	ր	ա		տ	ն	ա	ձ				
6	2	ի	թ	ա	դ	ւ	ն	է				
7	ա	ա	ի	ա	ա	կ	ւ	ա	ր	ի		
8	ր	է	ն	ա	ր	ա	ա	կ	է	մ		
9		ճ	ա		թ	ա	կ			մ		
10	լ	ա	ւ	է	ր	ն	ւ	ն	ի	ա		
11	ն	ր		յ	ւ		ա	գ	ա	հ		
12	կ	ն	ւ	ա	ն		ի	ր	կ	ը		

ԼՈՒՐԵՐ

ԵՐԿՐԵՐԵՐԹ

28/8



22° 33°

ԵՐԵՐԵՐԵՐԹ

29/8



22° 35°

ՉՈՐԵՐԵՐԵՐԹ

30/8



22° 37°

ՀԻՆՃԵՐԵՐԹ

31/8



22° 39°

ՈՐՐԱՐԹ

1/9



20° 37°

ՇՐՐԱՐԹ

2/9



25° 41°

ԿԻՐԱԿԻ

3/9



24° 40°

ԵԱԳՈՒԴԻԷԻ Ս. ԱՆՆԱՅԻ ՈՒԽՏԻ ՕՐԸ ՀՈԾ ԲԱԶՄՈՒԹԵԱՄԲ ՅԻՇԱՏԱԿՈՒԵՅԱԼ ՍՐԲ. ԲԱՌԱՍՆԻՅ՝ ՍԱՆԿԱՆՅ՝ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՄԵՉ

Հանդիսապետութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Ս. Եպս. Աջգար-

շնորհք ըրաւ համախմբուելու Սրբ. Զառամսից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ եւ տօնելու Ս. Աննայի յիշատակի տօնը, որ դժբախտաբար վերջին քանի մը տարիներուն ուխտատեղի էն հեռու կը կատարուի, սակայն յոյս յայտնեց, որ արդարութեան արեգակը պիտի ծագի, խաղաղութիւն պիտի հաստատուի եւ այս տօնը դարձեալ պիտի յիշատակենք եագուպիտ գիւղէն ներս, ու խտատեղի հռչակուած Ս. Աննա եկեղեցւոյ մէջ:



Հանդիսապետութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Ս. Եպս. Աջգար-եանի, կազմակերպութեամբ Եագուպիտի Հայրենակցական Միութեան, Կիրակի, 20 Օգոստոս 2023-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, Սրբ. Զառամսից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, աւանդութիւնը պահելով յիշատակուեցաւ Ս. Աննայի ուխտի օրը, հոծ բազմութեան ներկայութեան, նկատի ունենալով որ Եագուպիտ գիւղը, ուր կը գտնուի Ս. Աննա եկեղեցին, տակաւին անապահով վիճակի մէջ կը գտնուի: Արարողութեան ներկայ գտնուեցան նաեւ Առաջնորդի Օգնական Հոգ. Ս. Մանուկ Վրդ.

Սրբազան Հայրը դիտել տուաւ, որ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին յաջորդող ութ օրերը մեր սրբազան հայրապետներուն կարգաւորումով նուիրուած են աղօթքներու, շարականներու եւ աստուածաշնչական ընթերցումներու, որպէսզի անոնց միջոցով Աստուածամօր Վերափոխման տօնը վերաթարմանայ հաւատացեալներու հոգիներուն, մտքերուն եւ սրտերուն մէջ:



Սրբազան Հայրը յայտնեց, որ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը եւ Ս. Աննայի տօնը իրարու առջւեպ են: Ս. Կոյս Մարիամի ծնողները՝ Պարիխանեան, Ազգ. Վարչութեան անդամներ եւ Յարաբերական Մարմինի ներկայացուցիչը:



Սրբազան Հայրը յայտնեց, որ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը եւ Ս. Աննայի տօնը իրարու առջւեպ են: Ս. Կոյս Մարիամի ծնողները՝ Պարիխանեան, Ազգ. Վարչութեան անդամներ եւ Յարաբերական Մարմինի ներկայացուցիչը:

Սրբազան Հայրը յայտնեց, որ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը եւ Ս. Աննայի տօնը իրարու առջւեպ են: Ս. Կոյս Մարիամի ծնողները՝ Պարիխանեան, Ազգ. Վարչութեան անդամներ եւ Յարաբերական Մարմինի ներկայացուցիչը:



Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցեց Արժ. Տ. Գառնիկ Զինյ. Հափանեան: Օրուան պատգամը հաւատացեալներուն ուղղեց Առաջնորդ Սրբազան Հայրը, որ սրտի խոր գոհունակութեամբ եւ երախտագիտական հոգիով փառք եւ գոհութիւն յայտնեց Աստուծոյ, որ առիթ ստեղծեց եւ Աննան եւ Յովակիմը բարեպաշտ, աստուածասեր, եկեղեցասեր եւ առաքինութիւններով լեցուն զոյգեր էին եւ երբ շարունակ աղօթելով Աստուծամէ խնդրեցին, որ իրենց գաւակ մը շնորհէ, ստացան տարիներու իրենց հաւատքի պայքարին պտու-

Աննան եւ Յովակիմը բարեպաշտ, աստուածասեր, եկեղեցասեր եւ առաքինութիւններով լեցուն զոյգեր էին եւ երբ շարունակ աղօթելով Աստուծամէ խնդրեցին, որ իրենց գաւակ մը շնորհէ, ստացան տարիներու իրենց հաւատքի պայքարին պտու-

ԱԻՆՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՇՏՈՎ ՂՆԵՄԻԷ ՀԱՅԱԲՆԱԿ ԳԻՂԻՆ ՄԵՉ Ս. ԱՍՏՈՒԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԽԱՂՈՂՈՐԶՆԷՔ ԵՒ ՄԱՏԱՂՈՐԶՆԷՔ ԿԱՏԱՐՈՒԵՅԱՆ

Հանդիսապետութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Ս. Եպս. Աջգար-եանի, Շաբաթ, 19 Օգոստոս 2023-ի առաւօտուն, պահելով տարիներու աւանդութիւնը, Ղնեմիէ հայաբնակ գիւղին մէջ հանդիսաւորապէս յիշատակուեցաւ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը:

Եւ մատաղօրինք կատարելու: Սրբազան հայրը Տիրամօր տիպարը օրինակ առնելով յորդորեց




հաւատացեալները, որպէսզի Աստուածամօր վարքին նման առաքինի կեանք մը ապրին: Ան դիտել տուաւ, որ առաջին Եւան՝ մեղքին ծնունդ տուաւ իր անհնազանդութեան պատճառով, իսկ երկրորդ Եւան՝ Մարիամը, ծնունդ տուաւ արդարութեան արեգակին եւ մարդկութեան փրկիչին՝ Յիսուս Զրիստոսին, հետեւաբար, Մարիամ իր հնազանդութեան, համեստութեան եւ խոնարհութեան շնորհիւ արժանացաւ «Աստուածամայր» կոչումին, իր որովայնին մէջ կրեց Աստու-



Սրբազան Հայրը յայտնեց, որ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը եւ Ս. Աննայի տօնը իրարու առջւեպ են: Ս. Կոյս Մարիամի ծնողները՝ Պարիխանեան, Ազգ. Վարչութեան անդամներ եւ Յարաբերական Մարմինի ներկայացուցիչը:

Սրբազան Հայրը յայտնեց, որ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը եւ Ս. Աննայի տօնը իրարու առջւեպ են: Ս. Կոյս Մարիամի ծնողները՝ Պարիխանեան, Ազգ. Վարչութեան անդամներ եւ Յարաբերական Մարմինի ներկայացուցիչը:



Սրբազան Հայրը յայտնեց, որ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը եւ Ս. Աննայի տօնը իրարու առջւեպ են: Ս. Կոյս Մարիամի ծնողները՝ Պարիխանեան, Ազգ. Վարչութեան անդամներ եւ Յարաբերական Մարմինի ներկայացուցիչը:



Սրբազան Հայրը յայտնեց, որ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը եւ Ս. Աննայի տօնը իրարու առջւեպ են: Ս. Կոյս Մարիամի ծնողները՝ Պարիխանեան, Ազգ. Վարչութեան անդամներ եւ Յարաբերական Մարմինի ներկայացուցիչը:



Սրբազան Հայրը յայտնեց, որ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը եւ Ս. Աննայի տօնը իրարու առջւեպ են: Ս. Կոյս Մարիամի ծնողները՝ Պարիխանեան, Ազգ. Վարչութեան անդամներ եւ Յարաբերական Մարմինի ներկայացուցիչը:

Սրբազան Հայրը յայտնեց, որ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը եւ Ս. Աննայի տօնը իրարու առջւեպ են: Ս. Կոյս Մարիամի ծնողները՝ Պարիխանեան, Ազգ. Վարչութեան անդամներ եւ Յարաբերական Մարմինի ներկայացուցիչը:

Սրբազան Հայրը յայտնեց, որ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը եւ Ս. Աննայի տօնը իրարու առջւեպ են: Ս. Կոյս Մարիամի ծնողները՝ Պարիխանեան, Ազգ. Վարչութեան անդամներ եւ Յարաբերական Մարմինի ներկայացուցիչը: